

ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՆՅՈՒԹԱ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՇՂԹԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՈՒՇԱԳԻՐ

ԹԱՐՄ ՄԻՐԳ ՈՒ ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ

Ներդրումային միջավայրի խորհրդատվական ծառայություններ | Համաշխարհային բանկի խումբ



THE WORLD BANK



World Bank Group
Multilateral Investment
Guarantee Agency

Համագործակցելով՝



Development Cooperation
Ministry of Foreign Affairs

© Միջազգային ֆինանսական կորպորացիա, 2013 թ.:
Բոլոր իրավունքները պաշտպանված են:

2121 Փենսիլվանիա պողոտա, հյուսիս-արևմուտք,
Վաշինգտոն, Կոլումբիայի շրջան, 20433, ԱՄՆ
Կայք՝ www.ifc.org

Սույն աշխատությունում ներկայացված նյութի հեղինակային իրավունքները պաշտպանված են: Առանց թույլտվության սույն աշխատությունն ամբողջությամբ կամ դրա որևէ մասի կրկնօրինակումը և (կամ) տարածումը կարող է համարվել գործող օրենսդրության խախտում: IFC-ն խրախուսում է իր աշխատանքների տարածումը և սովորաբար արագ կերպով տրամադրում աշխատության մասերի վերարտադրման թույլտվությունը, իսկ կրթական և ոչ առևտրային նպատակներով վերարտադրման դեպքում՝ անվճար թույլտվությունը, պայմանով, որ կապահովվեն մեր կողմից ողջամտորեն պահանջվող հղումները և նշումները:

IFC-ն չի երաշխավորում սույն աշխատության մեջ ներառված բովանդակության կամ դրանում նկարագրված եզրակացությունների կամ դատողությունների ճշգրտությունը, արժանահավատությունն ու ամբողջականությունը և պատասխանատվություն կամ պարտավորություն չի կրում բովանդակության մեջ տեղ գտած բացթողումների կամ սխալների (ներառյալ՝ ուղղագրական կամ տեխնիկական սխալների՝ առանց բացառությունների) կամ էլ դրանց արժանահավատության համար: Սույն աշխատությունում որևէ քարտեզի վրա ցուցադրված սահմանները, գույները, անվանումները և այլ տեղեկությունները չեն արտահայտում Համաշխարհային բանկի կարծիքը որևէ տարածքի իրավական կարգավիճակի, սահմանների հաստատման կամ ընդունման վերաբերյալ: Սույն աշխատությունում ներկայացված բացահայտումները, մեկնաբանությունները և եզրահանգումները պարտադիր չէ, որ արտացոլեն Համաշխարհային բանկի գործադիր տնօրենների կամ նրանց կողմից ներկայացվող կառավարությունների տեսակետները:

Սույն աշխատության բովանդակությունը նախատեսված է միայն ընդհանուր տեղեկատվական նպատակների համար և իրավական, արժեթղթերի կամ ներդրումների գծով խորհուրդ տալու, որևէ ներդրման նպատակահարմարության վերաբերյալ կարծիք հայտնելու կամ որևէ միջնորդություն անելու նպատակ չի հետապնդում: IFC-ն կամ նրա հետ փոխկապակցված անձինք կարող են ներդրումներ կատարել, այլ խորհրդատվություն կամ ծառայություններ տրամադրել կամ ֆինանսական շահ ունենալ որոշ ընկերություններում և կողմերում (ներառյալ՝ սույն աշխատությունում նշվածները):

Իրավունքների և լիցենզիաների, այդ թվում նաև՝ հարակից իրավունքների վերաբերյալ մնացած բոլոր հարցերը պետք է ուղղվեն IFC-ի կորպորատիվ հարաբերությունների բաժին՝ 2121 Փենսիլվանիա պողոտա, հյուսիս-արևմուտք, Վաշինգտոն, Կոլումբիայի շրջան, 20433, ԱՄՆ հասցեով:

Միջազգային ֆինանսական կորպորացիան (IFC) միջազգային կազմակերպություն է, որը ստեղծվել է իր անդամ երկրների միջև կնքված Համաձայնագրի հոդվածների համաձայն և հանդիսանում է Համաշխարհային բանկի խմբի անդամ: Բոլոր անվանումները, խորհրդանշանները և ապրանքային նշանները պատկանում են IFC-ին, և առանց IFC-ի գրավոր համաձայնության ոչ մի նման նյութ չի կարող օգտագործվել այլ նպատակով: Բացի այդ, «Միջազգային ֆինանսական կորպորացիան» և «IFC»-ն IFC-ի գրանցված ապրանքային նշաններն են և պաշտպանված են միջազգային օրենսդրությամբ:

Գյուղարտադրանքի արտահանման նյութատեխնիկական (ՆՅՈՒՏ) ապահովման շղթայի վերաբերյալ սույն հուշագիրը հրատարակվել է «Հայաստանում ներդրումային միջավայրի բարեփոխումների ծրագրի» շրջանակներում: Ծրագիրը նախաձեռնվել է Համաշխարհային բանկի խմբի ներդրումային միջավայրի խորհրդատվական ծառայությունների կողմից և իրականացվում է Համաշխարհային բանկի խմբի անդամ՝ IFC-ի կողմից:

«Հայաստանում ներդրումային միջավայրի բարեփոխումների ծրագրի» նպատակն է աջակցել Հայաստանում ներդրումային միջավայրի բարելավմանը տեսչական ստուգումների, հարկային, արտաքին առևտրի ու սննդամթերքի անվտանգության ոլորտներում կարգավորման արդյունավետությունը բարձրացնելու և գործարարությամբ զբաղվելու ժամանակն ու ծախսերը նվազեցնելու միջոցով:

Համաշխարհային բանկի խմբի ներդրումային միջավայրի խորհրդատվական ծառայությունների մասին

Համաշխարհային բանկի խմբի ներդրումային միջավայրի խորհրդատվական ծառայություններն աջակցում են կառավարություններին իրականացնելու բարեփոխումներ գործարար միջավայրը բարելավելու և ներդրումները խրախուսելու ու ապահովելու նպատակով՝ դրանով իսկ նպաստելով մրցունակ շուկաների աճին և աշխատատեղերի ստեղծմանը:

Դոնոր գործընկերներ

«Հայաստանում ներդրումային միջավայրի բարեփոխումների ծրագրին» ֆինանսական աջակցություն են ցույց տալիս Ավստրիայի ֆինանսների նախարարությունը և Նիդերլանդների արտաքին գործերի նախարարությունը:

Ծրագրի դոնոր գործընկերների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար խնդրում ենք այցելել՝

Ավստրիայի ֆինանսների նախարարություն՝ <http://english.bmf.gv.at>

Նիդերլանդների արտաքին գործերի նախարարություն՝ www.minbuza.nl/en/home

Երախտիքի խոսք

Սույն հուշագիրը պատրաստել են Գագիկ Գաբրիելյանը (միջազգային առևտրի հարցերով խորհրդատու, Հայաստանում ներդրումային միջավայրի բարեփոխումների ծրագիր) և Անկուր Հուրիան (միջազգային առևտրի ՆՅՈՒՏ ապահովման մասնագետ, Համաշխարհային բանկի խմբի ներդրումային միջավայրի խորհրդատվական ծառայություններ) 2012 թ. հունվար-ապրիլ ժամանակահատվածում: Հուշագրի պատրաստման աշխատանքներն ուղղորդել է Ումա Մուբրամանյանը (միջազգային առևտրի ՆՅՈՒՏ ապահովման գլոբալ թիմի ղեկավար, Համաշխարհային բանկի խմբի ներդրումային միջավայրի խորհրդատվական ծառայություններ): Հայաստանում ներդրումային միջավայրի բարեփոխումների ծրագիրը ղեկավարում է Արսեն Նազարյանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ.....	5
ԲԱԺԻՆ I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	6
ՆՊԱՏԱԿՆԵՐ և ԵՂԱՆԱԿՆԵՐ (ՄԵԹՈԴ)	7
II. ԻՐԱՎԻՃԱԿ ԵՎ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ.....	10
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ և ԳՅՈՒՂԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ	11
ՓՈԽԱԴՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐ և ՄԻՋՈՑՆԵՐ	12
ՄԻՐԳ ՈՒ ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ և ԱՐՏԱՀԱՆՈՒՄ	14
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ	15
III. ԿԱՐԵՎՈՐ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ.....	18
Ա. ՏԵՂԱՓՈԽՄԱՆ և ՏԱՐԱՆՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊԱԾ ՀԱՐՑԵՐ	18
Բ. ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐ, ՊԱՀԵՍՏԱՎՈՐՈՒՄ և ԱՐԺԵՔԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	21
Գ. ՄԱՔՍԱՅԻՆ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ.....	23
Դ. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ	26
Ե. ՆԵՐԴՐԱՆՔԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ ԳՅՈՒՂԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ	28
Զ. ԳՅՈՒՂԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ՀԱՐԿԱՅԻՆ և ԴՐԱՄԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ	30
IV. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐ.....	33
«ԲՈՒՄԱՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔ,	37
«ԲՈՒՄԱՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔ,	38
V. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	43
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՔԱՐՏԵԶՆԵՐ	44
ՄԻՐԳ ՈՒ ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ – ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ՈՒՂՂԱԿԻ ԱՅԳՈՒՅ	44
ԹԱՐՄ ՄԻՐԳ ՈՒ ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ – ՓՈԽԱԴՐՈՒՄ, ՊԱՀԵՍՏԱՎՈՐՈՒՄ և ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ՊԱՀԵՍՏԻՅ	45
ԹԱՐՄ ՄԻՐԳ ՈՒ ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ –ՆՈՐ ՔԱՂԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ՕԴԱՆԱՎՈՎ	46
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ	47
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ-ՆԵՐՄՈՒԾՈՂԻ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ԵՐԱՆՈՒՄ	48
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԳՅՈՒՂԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ: 2009-2011 Թ.Թ.	49
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԲՈՒՄԱՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ	50
ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ	50
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ	51

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԶԱՀ	Ազատ առևտրի համաձայնագիր
ԱԴՆՀ	Ապրանքների դասակարգման ներդաշնակեցված համակարգ
ԱՀԿ	Առևտրի համաշխարհային կազմակերպություն
ԱՏԳԱԱ	Արտաքին տնտեսական գործունեության ապրանքների անվանացանկ
Առաքել	Առաքող
Արտո	Արտահանող
ԳԱՀԿ	Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն
Գեղամ	Գյուղատնտեսական արտադրանք արտադրող
ԵՄ	Եվրոպական միություն
ԵՆԱ	Երկակի նշանակության ապրանք
ԾԵՀ	Ծագման երկրի հավաստագիր
ԿՈՐ	Կառավարության որոշում
ՀԱԱՊ	Հայաստանի առևտրա-արդյունաբերական պալատ
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԲԱԿ	Հայկական բերքի առաջնորդման կենտրոն
ՀԲԽ	Համաշխարհային բանկի խումբ
ՀԶԱԻ	Հայաստանի չափագիտության ազգային ինստիտուտ
ՀՄԱԻ	Հայաստանի ստանդարտների ազգային ինստիտուտ
ՀՄԱԾ	Հայաստանի Մենդամթերքի անվտանգության ծառայություն
ՀՄԿ	Հսկողության սահմանային կետ
ՄՄ	Մաքսային միություն
Ներսո	Ներմուծող
ՆՅՈՒՏ	Նյութատեխնիկական
ՍԱՄԿ	Սահմանային մաքսային կետ
ՓՔ	Փորձաքննություն

ԲԱԺԻՆ I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գյուղարտադրանքի արտահանման նյութատեխնիկական (ՆՅՈՒՏ) ապահովման շղթայի վերաբերյալ հուշագիրը պատրաստվել է Համաշխարհային բանկի խմբի (ՀԲԽ) Հայաստանում ներդրումային միջավայրի բարեփոխում ծրագրի (ՆԵՄԻԲ ծրագիր) շրջանակում, որն սկսվել է 2011 թ. նոյեմբերին: ՆԵՄԻԲ ծրագիրը նախաձեռնվել է Հայաստանի կառավարության դիմումի հիման վրա, որպես շարունակություն ՀԲԽ Հայաստանում գործարարությամբ զբաղվելու բարեփոխումներ. կարգավորումների պարզեցում ծրագրի (ԳԶԲ ծրագիր): Վերջինս իրականացվել է 2009 թ. ապրիլից մինչև 2011 թ. սեպտեմբեր:

ԳԶԲ ծրագրի կարևոր բաղադրիչներից մեկը նպատակ ուներ բացահայտել և մատնանշել արտաքին առևտրի ՆՅՈՒՏ ապահովման շղթայում առկա խոչընդոտներն ու լուծումներ առաջարկել՝ դրանք նվազեցնելու կամ վերացնելու ուղղությամբ: Ծրագրի անձնակազմը պատրաստել է Հայաստանում ներմուծման և արտահանման գործընթացների մանրամասն քարտեզ՝ համագործակցելով ՀՀ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մաքսային ծառայության և ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ: Այդ քարտեզը ծառայեց որպես արդյունավետ գործիք խոչընդոտների հատկորոշման, ինչպես նաև կարճաժամկետ և միջնաժամկետ բարեփոխումների մշակման համար: Արդյունքում ՀՀ կառավարությունն ընդունեց և իրականացրեց տասից ավելի բարեփոխումներ (ընդունվեցին համապատասխան իրավական ակտեր)՝ ուղղված մաքսային և տեխնիկական հսկողության ընթացակարգերի պարզեցմանը: Ծրագիրն օգնեց կրճատել արտահանման և ներմուծման ընթացակարգերի համար ծախսվող ժամանակը: Ծրագիրը նաև օգնեց ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը պատրաստել և վեր-կայքում տեղադրել ինտերակտիվ քարտեզ ուղեցույց գործարարների համար, որտեղ քայլ առ քայլ ներկայացված են արտաքին առևտրի ընթացակարգերը: Քարտեզը տեղադրված է և հասանելի է Հայկական զարգացման գործակալության պաշտոնական վեբ-կայքում՝ www.ada.am.

ՆԵՄԻԲ ծրագիրը հիմնվում է նախորդ ծրագրի ձեռքբերումների վրա: ՆԵՄԻԲ ծրագրի նպատակն է գործարարների համար պարզեցնել կանոնակարգերն ու ընթացակարգերը՝ հատուկ ուշադրություն դարձնելով ագրոբիզնեսի հատվածին: Ծրագիրն ունի մի քանի ուղղություններ, այդ թվում՝ արտաքին առևտրի ընթացակարգեր, հարկային վարչարարություն, տեսչական ստուգումներ, սննդամթերքի անվտանգություն: ՀՀ կառավարությունը դիմել է ՆԵՄԻԲ ծրագրին, որպեսզի վերջինս պատրաստի երկու ապրանքատեսակների արտահանման ՆՅՈՒՏ շղթայի մանրամասն քարտեզ՝ ներառյալ արտահանման խոչընդոտների բացահայտումը և դրանց հաղթահարման համար առաջարկվող լուծումները: Սույն հուշագիրն առաջինն է այդ երկուսից և վերաբերում է գյուղատնտեսական ապրանքների, մասնավորապես, թարմ միրգ ու բանջարեղենի արտահանմանը:

Նպատակներ և եղանակներ (մեթոդ)

Սույն հուշագիրը պատրաստվել է ՀԲԽ ՆԵՄԻԲ ծրագրի շրջանակում: Հուշագրում (ա) հատկորոշվում են Հայաստանից գյուղատնտեսական ապրանքների արտահանման ՆՅՈՒՏ շղթայում առկա խնդիրներն ու դժվարությունները, (բ) ներկայացվում են գյուղատնտեսական ապրանքների մատակարարման շղթայում առկա հիմնական գործընթացները, (գ) տրվում են առաջարկություններ բարեփոխումների և հետագա քայլերի վերաբերյալ:

Սույն Հուշագրում ներկայացվում է գյուղարտադրանքի արտահանման ՆՅՈՒՏ ապահովման շղթան՝ 2012 թ. սկզբի դրությամբ: Հուշագրում ընդգրկված վերլուծությունը և առաջարկությունները հիմնված են առկա գործընթացների և ընթացակարգերի դիտարկման, ինչպես նաև ներմուծման ու արտահանման ընթացակարգերում ներգրավված տարբեր շահագրգիռ կողմերի հետ անցկացված հարցազրույցների վրա: Հուշագրի շրջանակը սահմանափակ է¹, և դրանում չի ներկայացվում Հայաստանից գյուղարտադրանքի արտահանման ՆՅՈՒՏ շղթայի համապարփակ պատկերը: Հուշագիրը նպատակ ունի մատնանշել շղթայում առկա հիմնական խնդիրները, որոնք պետք է հասցեագրվեն. հատուկ ուշադրություն է դարձվում փաստաթղթային և ընթացակարգային պահանջների պարզեցմանը, դրանց վրա ծախսվող ժամանակի կրճատմանը, ինչպես նաև ՆՅՈՒՏ ապահովման ենթակառուցվածքային և տեխնիկական զինվածությանն առնչվող խնդիրներին: Հուշագրում մաքսային ձևակերպումների ընթացակարգերի հետ միասին դիտարկվում են տեխնիկական հսկողության ընթացակարգերը (ինչպիսիք են բուսասանիտարական և սննդամթերքի անվտանգության հսկողությունը, ծագման երկրի հավաստագրումը):

Հանդիպումներ ու քննարկումներ են անցկացվել միջազգային առևտրի գործընթացում ներգրավված պետական, հասարակական, միջազգային և մասնավոր կազմակերպությունների հետ, ներառյալ՝ մաքսային և տեխնիկական (բուսասանիտարական, անասնաբուժական, երկակի նշանակության ապրանքների հսկողության, ապրանքի ծագման հավաստագրման) հսկողության մարմինները, արտահանողներն ու ներմուծողները, առաքողներն ու փոխադրողները, մաքսային միջնորդները (բրոքերներ), մասնագիտական միությունները, առևտրին առնչվող ծրագրեր իրականացնող միջազգային դոնոր կազմակերպությունները: Օգտագործվել են քննարկումների իրականացման տարբեր ձևաչափեր, մասնավորապես, առանձին հարցազրույցներ, քննարկումներ առանձին խմբերի հետ, համատեղ աշխատանքային ժողովներ ու կլոր սեղաններ տարբեր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ: Զուգահեռաբար, այցելություններ են կատարվել մաքսային պահեստներ, մաքսային կետեր և այլ համապատասխան վայրեր՝ տեսնելու և արտացոլելու իրականում տեղի ունեցող գործընթացն ու ընթացակարգերը, ենթակառուցվածքներն ու հարմարությունները: Կարևոր է նշել, որ դիտարկվել են նաև քննարկվող ընթացակարգերը կարգավորող օրենքներն ու իրավական այլ փաստաթղթերը:²

¹ Հուշագիրը նպատակ չունի վերլուծելու արտաքին առևտուրը կարգավորող իրավական ակտերը:

² Իրավական ակտերը դիտարկվել են գործող ընթացակարգերը ավելի ամբողջականորեն հասկանալու նպատակով, այսինքն՝ դա չի կատարվել որպես իրավական ակտերի ուսումնասիրություն կամ գնահատում:

Արտաքին առևտրի ՆՅՈՒՏ շղթայի վերլուծությունը հիմնված է 1-ին պատկերում ներկայացված տրամաբանական կառուցվածքի վրա: Այն ներառում է գյուղարտադրողի այգուց մինչև արտահանման շուկա ընկած քայլերը: Վերլուծությունը հիմնվում է չորս սյունների վրա. (1) կանոնակարգեր, որոնցով կարգավորվում է ՆՅՈՒՏ շղթան, այդ թվում՝ երկրում գործող և միջազգային պահանջները, ներառյալ՝ հղումներ միջազգային լավագույն գործելակերպերին, (2) իրական ընթացակարգեր և գործելակերպեր, (3) ենթակառուցվածքների առկայություն և օգտագործում, (4) հաստատություններ, դրանց դերն ու գործառույթները:

Հուշագրի 2-րդ բաժնում ներկայացված են հենքային տեղեկություններ, ներառյալ՝ Հայաստանի արտաքին առևտրի կատարողականի և գյուղարտադրության կառուցվածքին վերաբերող համառոտ տեղեկություններ: 3-րդ բաժնում ներկայացված են կարևոր դիտարկումներ գյուղարտադրանքի արտահանման և ներմուծման ընթացակարգերի ու փաստաթղթերի վերաբերյալ, ինչպես նաև որոշ հնարավոր բարեփոխումներ: Բաժինն ունի թարմ միրգ ու բանջարեղենի արտահանման քայլերը նկարագրող քարտեզներ՝ 1-ին հավելված: 4-րդ բաժնում ներկայացված են ՆՅՈՒՏ շղթայի հետագա բարելավմանն ուղղված առաջարկություններ:

Պատկեր 1. Առևտրի ՆՅՈՒՏ ապահովման շղթայի վերլուծության հենք



II. ԻՐԱՎԻՃԱԿ ԵՎ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ

Հայաստանն ունի շուկայական տնտեսություն, որը բաց է միջազգային առևտրի, կապիտալի, տեխնոլոգիական նորարարությունների համար: Տնտեսությունը հիմնված է ծառայությունների, հատկապես շինարարության, թեթև արդյունաբերության և մետաղագործության վրա, չնայած որ բնակչության զգալի մասը կախված է գյուղատնտեսությունից: Հայաստանը Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) անդամ է 2003 թվականից: Երկիրը կիրառում է արտաքին առևտրի շատ բաց վարչակարգ (ռեժիմ)՝ 0 կամ 10 տոկոս մաքսատուրքի դրույքաչափով: Մինչև համաշխարհային ֆինանսական ճգնաժամը Հայաստանի տնտեսական աճը երկնիշ էր, և 2004-2009 թ.թ. միջինում տարեկան 12 տոկոսից ավել էր: Սակայն համաշխարհային ֆինանսական ճգնաժամը լրջորեն ազդեց Հայաստանի տնտեսության վրա: «Տնտեսությունը տուժեց երեք միաժամանակյա հարվածներից՝ արտահանվող ապրանքների նկատմամբ պահանջարկի նվազումից, հանքահումքային ապրանքների միջազգային գների անկումից, և դրսում աշխատող կամ ապրող հայերից ստացվող դրամական փոխանցումների և մասնավոր կապիտալի հոսքի կտրուկ նվազումից»³: 2009 թ. ապրանքների արտահանումը նվազեց գրեթե 33 տոկոսով՝ համեմատած 2008 թ.-ի հետ, իսկ ներմուծումը նույն ժամանակահատված նվազեց 25 տոկոսով: Հաջորդող երկու տարիների ընթացքում Հայաստանը կարողացավ վերականգնել իր տնտեսությունը, և 2011-ին արտաքին առևտրի ծավալն աճեց ու հասավ նախաճգնաժամայինին:⁴ Հայաստանի արտահանման մեջ գերիշխում են հանքա-հումքային ապրանքները. 2008 թ. (48 տոկոս) ամբողջ արտահանման գրեթե կեսը բաժին է ընկել «թանկարժեք քարեր ու մետաղներ» և «ոչ թանկարժեք մետաղներ» ապրանքային խմբերին, իսկ մոտ 19 տոկոսը գյուղատնտեսական արտադրանքին: Համաշխարհային ֆինանսա-տնտեսական ճգնաժամից հետո տոկոսային այս հարաբերակցությունները մեծ փոփոխությունների չեն ենթարկվել: Լրացուցիչ մանրամասների համար տես 1-ին Աղյուսակը:

Չնայած այն բանին, որ տնտեսական և առևտրային կյանքը գնալով աշխուժանում է, և ՀՀ կառավարությունն իրականացրել է մի շարք բարեփոխումներ ուղղված արտաքին առևտրի ընթացակարգերի բարելավմանը, դեռևս առկա են զգալի խնդիրներ այդ ոլորտում: ՀԲԽ «Doing Business»-ի 2012 թ. զեկույցում Արտաքին առևտրի ցուցանիշներով Հայաստանը զբաղեցրել է 104-րդ տեղը 183 երկրների շարքում: Ներմուծման և արտահանման հնացած սահմանային ընթացակարգերը, որոնք ներառում են կրկնվող գործողություններ, խոչընդոտում են համաշխարհային տնտեսության, և մասնավորապես ԵՄ-ի հետ Հայաստանի առևտրային հարաբերությունների խորացմանը:

³ Country Partnership Strategy for the Republic of Armenia for the period FY09 – FY12, May 12, 2009, Europe and Central Asia Region, Համաշխարհային բանկ.

⁴ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն. <http://docs.armstat.am/nsdp/>.

Աղյուսակ 1. Հայաստանի արտաքին առևտուրը, հազար ԱՄՆ դոլարով

	2007	2008	2009	2010	2011
ՆԵՐՄՈՒԾՈՒՄ (ԸՆԴՀԱՄՆՈՒՐ)	3,267,788	4,426,129	3,321,134	3,748,954	4,151,500
Փոփոխություն՝ % նախորդ տարվա նկատմամբ		35.45%	-24.97%	12.88%	10.74%
ԱՐՏԱՀԱՆՈՒՄ (ԸՆԴՀԱՄՆՈՒՐ)	1,152,301	1,057,161	710,158	1,041,057	1,329,500
Փոփոխություն՝ % նախորդ տարվա նկատմամբ		-8.26%	-32.82%	46.60%	27.71%
Գյուղատնտեսական արտահանում	169,566	199,634	134,766	170,477	237,522
% ընդհանուր արտահանման նկատմամբ	14.72%	18.88%	18.98%	16.38%	17.87%
Թարմ մրգերի արտահանում	1,568	4,973	8,261	6,887	
% ընդհանուր արտահանման նկատմամբ	0.14%	0.47%	1.16%	0.66%	0.00%
% գյուղ. առևտրի նկատմամբ	0.92%	2.49%	6.13%	4.04%	0.00%
Թարմ բանջարեղենի արտահանում	165	1,774	1,603	2,594	
% ընդհանուր արտահանման նկատմամբ	0.01%	0.17%	0.23%	0.25%	0.00%
% գյուղ. առևտրի նկատմամբ	0.10%	0.89%	1.19%	1.52%	0.00%
Թանկարժեք քարեր և մետաղներ	208,729	173,088	105,075	134,049	196,441
% ընդհանուր արտահանման նկատմամբ	18%	16%	15%	13%	15%
Ոչ թանկարժեք մետաղներ	390,160	346,793	231,152	332,428	364,728
% ընդհանուր արտահանման նկատմամբ	34%	33%	33%	32%	27%
Փոխարժեք (AMD/USD)	342.08	305.97	363.28	373.66	372.5
Փոփոխություն՝ % նախորդ տարվա նկատմամբ		-10.56%	18.73%	2.86%	-0.31%

Աղբյուր՝ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի կենտրոնական բանկ

Գյուղատնտեսություն և գյուղարտադրության կառուցվածք

Գյուղատնտեսությունը Հայաստանի տնտեսության կարևոր մաս է. այն ապահովում է ՀՆԱ-ի 17 տոկոսն ու աշխատանքով ապահովում է առկա աշխատուժի կեսին: Հայաստանում կա շուրջ 450,000 հեկտար մշակելի հող, որից մշակվում է 300,000 –ից պակասը: Հայաստանյան գյուղատնտեսությունը հատուկ է մասնատված փոքր չափերի տնտեսությունները՝ ավելի, քան 335,000 գյուղացիական տնտեսություններ՝ միջինում 1.4 հա հողով: Գյուղացիական տնտեսությունների մեծ մասը առևտրային բնույթ չունի: Գյուղատնտեսության մասնատված կառուցվածքը ազդում է առաջնային արտադրության, վերամշակման, ինչպես նաև արտաքին առևտրի ՆՅՈՒՏ ապահովման շղթայի արդյունավետության վրա, քանի որ վաճառքի և բաշխման համար գյուղարտադրանքի կուտակումը դժվար է: Գյուղարտադրության և ՆՅՈՒՏ ապահովման դժվարությունների հաղթահարման, ինչպես նաև բազմազան մրգեր ու բանջարեղեն աճեցնելու համար նպաստավոր բնական հնարավորություններն օգտագործելու համար Հայաստանի գյուղարտադրողներն ու գործարարները մշակեցին մի շարք միջոցառումներ: Ահա դրանցից երկուսը.

- Ջերմոցային տնտեսությունների հիմնում և շահագործում. ներկայում կան մոտ 900 մասնավոր ջերմոց, որոնք ծածկում են 125 հա հող⁵ և տալիս են տարեկան 10,000 տոննա արտադրանք՝ գլխավորապես տեղական սպառման համար: Սպասվում է, որ

⁵ Փորձագիտական գնահատական:

ջերմոցային տնտեսություններում կատարվող ներդրումները կշարունակվեն: Հայկական բերքի առաջնության կենտրոնը (ՀԲԱԿ), որը նոր հիմնադրված կառույց է, նախատեսում է մոտակա 5 տարիների ընթացքում հիմնել 70 հեկտար ջերմոցներ Հայաստանի տարբեր շրջաններում:

- Սառնարանային տնտեսություններ. վերջին տարիներին Հայաստանում սառնարանային տնտեսություններում ներդրումներ են կատարել փոքր մասնավոր գյուղացիական տնտեսություններ, խոշոր գյուղարտադրողներ և տնտեսական զարգացմանն աջակցող միջազգային կառույցներ: Փոքր գյուղարտադրողները, հատկապես, միրգ արտադրողները, որոնք հաճախ գործում են կոոպերատիվների միջոցով իրենց տնտեսություններում և տնամերձ տարածքներում հիմնել են սառնարանային տնտեսություններ: Դրանցից շատերը փոքր տնտեսություններ են, ամենապարզ սարքավորումներով: Ժամանակակից կատարելագործված սառնարանային պահեստներ են կառուցվել Զվարթնոց օդանավակայանում և Երևանում: Այդ տնտեսությունները տարբեր են իրենց չափերով և տարողությամբ: Օրինակ՝ օդանավակայանի պահեստը զբաղեցնում է մոտ 600 քմ տարածք, մոտ 140 տոննա տարողությամբ: Տարբեր միջազգային կառույցները աջակցել են այդ գործընթացին. օրինակ՝ Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ Հայաստան ծրագիրը Հայաստանի տարբեր շրջաններում հիմնել է 21 սառնարանային փոքր պահեստներ և գյուղարտադրանքի հավաքման 3 կենտրոններ թարմ միրգ ու բանջարեղենի համար:

Կատարված ներդրումների շնորհիվ մեծացել է սառը պահեստավորման կարողությունը, սակայն եթե Հայաստանը նպատակ ունի զգալիորեն մեծացնելու իր արտահանման ծավալը, ապա կարիք կլինի սառնարանային պահեստների ավելացման: Այդ առումով, Հայաստանի կառավարությունը մտադիր է Զվարթնոց օդանավակայանում ստեղծել Ազատ տնտեսական գոտի, որը ծրագրվում է օգտագործել նաև գյուղարտադրության արտահանման համար՝ նպաստելով ավելի բարձր արժեք ստեղծելու կարողությունների մեծացմանը:

Փոխադրման ուղիներ և միջոցներ

Հայաստանը ցամաքապատ երկիր է և գտնվում է Սև և Կասպից ծովերի միջև: Հայաստանը սահմանակից է Ադրբեջանի (որի հետ հակամարտության մեջ է 1991 թ.–ից), Վրաստանի (որը վերջին տարիների հակամարտության մեջ էր Ռուսաստանի հետ), Իրանի (որը ենթակա է միջազգային առևտրային սահմանափակումների), և Թուրքիայի (որի հետ Հայաստանը չունի դիվանագիտական հարաբերություններ 1990-ական թվականներից) հետ: Ցամաքապատ լինելը և բարդ աշխարհաքաղաքական միջավայրում գտնվելը ավելի են դժվարացնում Հայաստանի խնդիրները արտաքին առևտրի ՆՅՈՒՏ ապահովման ոլորտում և բարեփոխումը դարձնում ավելի կենսական:

Հայաստանից արտահանման հիմնական փոխադրամիջոցները և ուղիները հետևյալն են.

- Բեռնատար ավտոմեքենաներով՝ Բագրատաշենի սահմանային կետով (Հայաստանի հյուսիսում) դեպի Վրաստան, տարանցում Վրաստանով և անցում դեպի Ռուսաստան՝

Լարսի սահմանային կետով դեպի ռուսաստանյան և ուկրաինական շուկաներ: **Մա միրգ ու բանջարեղենի արտահանման գլխավոր ուղին ու եղանակն է:**

- Բեռնատար ավտոմեքենայով և նավով՝ (մեկից ավելի փոխադրամիջոցներով) Բագրատաշենի սահմանային կետով այնուհետև տարանցում Վրաստանով դեպի Փոթի կամ Բաթումի նավահանգիստներ⁶ և առաքում այնտեղից լաստանավերով դեպի արտահանման շուկաներ՝ Ուկրաինայում՝ Իլյիշովսկ և Ռուսաստանում՝ Նովոռոսիյսկ նավահանգիստներով: Այս ուղին հատկապես օգտագործվում է, երբ դեպի Ռուսաստան տանող Լարսի սահմանային կետը փակվում է ձյան կամ Վրաստան–Ռուսաստան հակամարտության պատճառով:
- Օդանավով՝ Զվարթնոց օդանավակայանից (դեպի Մոսկվա), որտեղ գործում է նորաստեղծ սառնարանային տնտեսություն (մոտ 140 տոննա տարողությամբ). Փոխադրման այս եղանակն օգտագործվում է նեղ շուկայի համար՝ **նոր քաղած թարմ միրգ ու բանջարեղենի արտահանում առանց պաղեցման կամ սառեցման, այսինքն՝ արտահանում նույն օրը:**
- Երկաթգծով՝ Հայաստանի Զիլիգա կայարանով դեպի Վրաստանի Փոթի նավահանգիստ և այնտեղից նավով դեպի արտահանման շուկաներ: Երկաթգծի թարմ միրգ ու բանջարեղենի համար չի օգտագործվում:⁷

Համաձայն առևտրականների, առաքողների⁸ և փոխադրողների հաղորդած տվյալների՝ 20 տոննա տարողությամբ բեռնատար ավտոմեքենայով Երևանից Վրաստանով (Վրաստան–Ռուսաստան Լարս–Կազբեգի սահմանային կետով) մինչև Մոսկվա փոխադրման գինը 6,000–6,500 ԱՄՆ դոլար է:⁹ Եթե մեկից ավելի փոխադրամիջոց է օգտագործվում, ապա այդ գնին ավելանում է լրացուցիչ 1500 ԱՄՆ դոլար:

Օդանավով արտահանման 99 տոկոսը կատարվում է ուղևորատար օդանավերով: Օրական 7-8 թռիչքների միջոցով կարող է արտահանվել մոտ 20-տոննա ապրանք՝ գլխավորապես դեպի Ռուսաստան՝ Մոսկվայի շուկա: Մեկ տոննա ապրանք փոխադրելու վարձը 2000 ԱՄՆ դոլար է: Զվարթնոց օդանավակայանում գործում են ևս երկու օդային փոխադրողներ՝ Գերմանական օդային բեռնափոխադրողը (Air cargo Germany) և Հայկական ավիաուղիները (Air Armenia): Սակայն այդ փոխադրողները կենտրոնացել են հիմնականում ներմուծման վրա: Օդանավով փոխադրման հետ կապված այլ ծախսերը ներառում են՝ բեռնման և բեռնաթափման ծախսերը՝ 102 ԱՄՆ դոլար մեկ տոննայի համար, մաքսային վճար (մաքսային ծառայությունների համար)՝ 7,000 ՀՀ դրամ և մաքսային միջնորդի վճար՝ 50,000 ՀՀ դրամ:

Համաձայն ՀԲԽ «Doing Business» զեկույցի՝ Հայաստանից արտահանման համար պահանջվող ծախսը 2011 թ. կազմել է 1,815 ԱՄՆ դոլար (մանրամասների համար տես 2–րդ աղյուսակը):

⁶ Երևանից մինչև վրացական ամենամոտիկ նավահանգիստ՝ Փոթի ընկած հեռավորությունը 650 կիլոմետր է, իսկ մինչև Բաթումի՝ 720 կիլոմետր:

⁷ Երկաթգծով միջև Ուկրաինա փոխադրման գինը 8,500 ԱՄՆ դոլար է: Մեկ վագոնի տարողությունը՝ 62-64 տոննա:

⁸ Հայաստանում գործում է Առաքողների միություն, որն ունի 15 անդամ, որոնք միասին առաքում են արտահանման մոտ 70 տոկոսը:

⁹ Որոշ արտահանողներ նշում են, որ փոխադրման ծախսը կարող է հասնել 13,000 ԱՄՆ դոլար:

Աղյուսակ 2. Արտահանման ծախսեր (20 ոտնաչափ բեռնարկ)

Ծախսեր	Չափման միավոր	2010	2011
Փաստաթղթերի ծախսեր	\$ /հայտարարագիր	190	190
Նավահանգստում և պահեստներում բեռնման և բեռնաթափման ծախսեր	\$ /առաքում	250	300
Մաքսային ձևակերպումների և տեխնիկական հսկողության ծախսեր	\$ /հայտարարագիր	75	75
Երկրի ներսում տարանցման և բեռնման ու բեռնաթափման ծախսեր	\$ /առաքում	1,150	1,250
ԸՆԴԱՄԵՆԸ	\$ /առաքում	1,665	1,815

Աղբյուրը՝ Doing Business

Միրգ ու բանջարեղենի արտադրություն և արտահանում

Հայաստանի բնական պայմանները հարմար են միրգ ու բանջարեղենի մեծ տեսականի արտադրելու համար, մասնավորապես, ծիրան, դեղձ, բալ ու կեռաս, խաղող, խնձոր, տանձ, կարտոֆիլ և լոլիկ (արտադրության և մանրամասների համար տես 3-րդ աղյուսակը և 2-րդ հավելվածը): Հայաստանից արտահանվող հիմնական մրգերն են ծիրանը, խաղողը, կեռասը, սալորը, իսկ բանջարեղենը՝ կարտոֆիլը և լոլիկը: Միրգ ու բանջարեղենի արտահանման հիմնական շուկան Ռուսաստանն է (90 տոկոս բաժնով): Արտահանման այլ շուկաներ են Վրաստանը, Իրաքը, Ղազախստանը, Ուկրաինան և Բելառուսը: 2-րդ հավելվածում ներկայացված են մանրամասներ արտահանման ծավալների և շուկաների վերաբերյալ:

Աղյուսակ 3. Որոշ գյուղարտադրանքների արտադրության և արտահանման ծավալներ

	Արտադրություն			Արտահանում					
	2009	2010	2011	2009	2010	2011			
	Տոննա	տոննա	տոննա	տոննա	\$000'	տոննա	\$000'	տոննա	\$000'
Ծիրան, դեղձ, կեռաս	161,100	39,400	117,137	12,096	5,315.9	2,488	1,731.4		
Խաղող	208,650	222,900	229,589	3,743	2,195.5	6,262	4,871.6		
Խնձոր և տանձ	150,500	73,800	101,845	401	167.5	26	12.1		
Կարտոֆիլ	593,600	482,000	556,886	5,909	774.4	4381	755.1		
Լոլիկ	278,600	251,200	273,479	621	144.8	898	559.4		

Գյուղատնտեսական արտադրանքի արտահանումը Հայաստանից 2010 թ. կազմել է 170.5 միլիոն ԱՄՆ դոլար՝ ամբողջ արտահանման 16 տոկոսը (տես 2-րդ հավելված): Թարմ միրգ ու բանջարեղենի արտահանումն այդ տարի եղել է 9.5 միլիոն ԱՄՆ դոլար, ինչը գյուղարտադրանքի արտահանման 6 տոկոսն է: Միրգ ու բանջարեղենի մեջ ամենամեծ բաժինն ընկնում է խաղողին (50 տոկոսից ավել), ծիրանին, դեղձին և կեռասին: Արժեքի առումով ամենամեծ բաժինն ընկնում է ծիրանին, այնուհետև խաղողին և կարտոֆիլին: Ծիրանի արտահանումը 2011 թ. եղել է 7,000 տոննա, 2010 թ. մոտ 2,500 տոննա, իսկ 2009 թ.

12,096 տոննա: Խաղողի արտահանումը 2009 թվականից աճել է 3,700 տոննայից մինչև ավելի, քան 6,200 տոննա 2010 թ.-ին և 6,339 տոննա 2011 թ.-ին: Հայաստանում գործում են շուրջ 20 թարմ միրգ ու բանջարեղեն արտահանողներ, ովքեր իրականացնում են տարեկան մոտ 6,000 առաքում¹⁰:

Ինչպես երևում է վերևի աղյուսակից, թարմ միրգ ու բանջարեղենի արտահանման ծավալները ենթակա են մեծ տատանումների, ինչը ազդում է արտաքին շուկաներում հայաստանյան արտահանողների՝ կայուն մատակարարում ապահովելու կարողության վրա: Բացի բնական պայմաններից, կան մի շարք այլ գործոններ, ներառյալ՝ երկարաժամկետ պայմանագրերի պակասը կամ բացակայությունը, կարճաժամկետ ֆինանսավորման պակասը, որոնք բացասաբար են ազդում մատակարարման շղթայի ենթակառուցվածքներում արտահանողների՝ ներդրումներ կատարելու կարողության վրա: Ի լրումն դրա, տարվա եղանակները նույնպես կարևոր գործոն են, և ազդում են արտադրանքի գների, ՆՅՈՒՏ և բաշխման ծառայությունների մատչելիության վրա, քանի որ միաժամանակ մեծ քանակի արտադրանք է թողարկվում: Հայաստանում տարվա ընթացքում գյուղարտադրանքի բերքահավաքի թեժ ժամկետները.

- Ծիրան՝ հունիսի կեսից մինչև հուլիսի կեսը
- Խաղող՝ օգոստոսի վերջից մինչև հոկտեմբերի կեսը
- Դեղձ՝ հուլիսի վերջից հոկտեմբերի կեսը
- Կեռաս և բալ՝ մայիսի վերջից օգոստոսի սկիզբ
- Սալոր՝ հունիսի կեսից մինչև սեպտեմբերի կեսը:

Հայաստանում իրականացվող ծրագրեր

Հայաստանում իրականացվել և իրականացվում են մի շարք ծրագրեր, որոնք առնչվում են ՀԲԽ Հայաստանում ներդրումային միջավայրի բարեփոխման ծրագրի (ՆԵՄԲ ծրագիր) բաղադրիչներին: ՆԵՄԲ ծրագրի թիմը կձգտի լրացնել այդ ծրագրերին: Այդ ծրագրերից մի քանիսը ներկայացված են ստորև:

- **Հայկական բերքի առաջնության կենտրոնը (ՀԲԱԿ)** պետություն–մասնավոր համագործակցությամբ նոր ստեղծված կառույց է (գործում է 2011–ից): Կենտրոնը նպատակ ունի նպաստելու բուսաբուծության ոլորտի զարգացմանը՝ ագրոբիզնեսի մատակարարման շղթայում արժեք ավելացնելու միջոցով, ներառյալ գյուղարտադրության կառավարման բարելավումը, բերքահավաքի արդյունավետ գործելակերպերի ներդրումը և շուկայավարման կատարելագործումը: ՀԲԱԿ-ը նախատեսում է մոտակա 5 տարիների ընթացքում հիմնել 70 հեկտար ջերմոցներ Հայաստանի տարբեր շրջաններում: ՀԲԱԿ-ի մասին լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել հետևյալ հասցեում՝ www.ahpc.am:
- **Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ Հայաստան ծրագիրը (ՀՄՀ Հայաստան ծրագիր)**, որը ստեղծվել է ԱՄՆ կառավարության կողմից և գործել 2006-2011 թ.թ., կատարել է 177 միլիոն ԱՄՆ դոլարի ներդրում Հայաստանի գյուղատնտեսությունում: ՀՄՀ Հայաստան ծրագիրն ուներ 3 հիմնական բաղադրիչներ՝ (1) ոռոգման համակարգի

¹⁰ Առաքումների 6,000 թիվը գնահատվել է ելնելով Հայաստանի Սննդամթերքի անվտանգության ծառայություն թողարկած բուսասանիտարական հավաստագրերի քանակից:

բարեկարգում, (2) գյուղական ճանապարհների վերականգնում, և (3) ջրից դեպի շուկա բաղադրիչ: Ջրից դեպի շուկա բաղադրիչում ՀՄՀ Հայաստան ծրագիրը տեխնիկական աջակցություն է տրամադրել գյուղարտադրողներին արտադրության և ջրի կառավարման, ինչպես նաև բերքի հետ ճիշտ վարվելու հարցերով: ՀՄՀ Հայաստան ծրագրի համաձայն՝ Հայաստանի տարբեր շրջաններում ստեղծվել են թարմ միրգ ու բանջարեղենի հավաքման 21 կետեր և գյուղարտադրանքի կենտրոնացման 3 կետեր: ՀՄՀ Հայաստան ծրագրի մասին լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել հետևյալ հասցեում՝ www.mca.am.

- **Համաշխարհային բանկը Հայաստանում ֆինանսավորում է մեծ թվով ծրագրեր,** որոնց թվում կան նաև առևտրի դյուրինացման և մաքսային ոլորտներին առնչվող ծրագրեր: Զարգացման քաղաքականության գործողությունների ծրագիրը (DPO-II)¹¹, որը հաստատվել է 2011 թ. հունվարի 11-ին, ներառում է մաքսային բարեփոխումների կարևոր բաղադրիչ և նպատակ ունի նպաստելու Հայաստանում ներդրումային միջավայրի բարելավմանը: Սույն հուշագրում տեղ գտած նկատառումներն ու առաջարկությունները լրացնում են DPO-ի նպատակները, որոնք ուղղված են ավելի երկարաժամկետ և ընդգրկուն բարեփոխումների:¹²
- **Եվրամիության հետ խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի** նախապատրաստական հաշվետվության մեջ նույնպես ներառված են առաջարկություններ արտաքին առևտրի դյուրինացման վերաբերյալ, և սույն Հուշագրում հաշվի են առնվել նաև այդ առաջարկությունները:
- **Եվրամիության խորհրդատվական խումբը** աջակցում է Հայաստանին ծրագրելու և իրականացնելու բարեփոխումներ և կատարելու միջազգային պարտավորությունները: Խմբի աշխատանքները առնչվում են, այլոց հետ, արտաքին առևտրի, մաքսային, սանիտարական և բուսասանիտարական, սննդամթերքի անվտանգության ոլորտներին և ուղղված են Հայաստանին օգնելու պատրաստվել Եվրամիության հետ խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրին: Մաքսային ոլորտում ԵՄ խորհրդատվական խումբը օգնում է պարզեցնել մաքսային օրենսդրությունը և այն ներդաշնակեցնելու ԵՄ օրենսդրության հետ, ինչպես նաև բարելավելու համագործակցությունը մաքսային և այլ մարմինների միջև (հարցերը ներառում են՝ մաքսային արժեքի որոշում, ընթացակարգերի պարզեցում, ռիսկերի կառավարման բարելավում, ուսումնավարժանք, հարևան երկրների հետ մաքսային սահմանների աշխատանքի բարելավում (սահմանների համատեղ կառավարման շրջանակում): ԵՄ-ի խորհրդատվական խմբի մասին լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել հետևյալ հասցեում՝ www.euadvisorygroup.eu:

¹¹ DPO բյուջեի աջակցման գործողությունը ՀՀ կառավարությանն աջակցում է երեք ռազմավարական ուղղություններով. (1) արտաքին ցնցումների նկատմամբ Հայաստանի խոցելիության և դրանց սոցիալական հետևանքների հաղթահարման (մեղմացման), (2) միջին ժամկետում հետձգնաժամային վերականգնման և աճի, համար մրցունակության բարձրացման և (3) հաստատութենական բարեփոխումների շարունակություն՝ պետական որոշումների կայացման որակի բարձրացման նպատակով:

¹² Համաշխարհային բանկն ունի գյուղատնտեսական ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված երկու այլ ծրագրեր. RESCAD-Գյուղական ձեռնարկատիրության և փոքր առևտրային գյուղատնտեսության զարգացման ծրագիր (Rural Enterprise and Small Scale Commercial Agriculture Development), և CARMAC – Համայնքներում գյուղատնտեսական հնարավորությունների կառավարման և մրցունակության ծրագիր (Community Agriculture Resource Management and Competitiveness Project):

- **USAID-ի Շուկայում մրցունակության և ձեռնարկությունների զարգացման ծրագիրը** ներառում է բաղադրիչներ, որոնք վերաբերում են գյուղարտադրության արտահանման խթանմանը, օրինակ՝ որոշ ապրանքների արտադրությունում արժեքի ստեղծման շղթայի ուսումնասիրություն:

III. ԿԱՐԵՎՈՐ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Ա. Տեղափոխման և տարանցման հետ կապված հարցեր



Գյուղարտադրանքի արտահանումը պահանջում է ապրանքի տեղափոխման բավականին կատարելագործված համակարգ, որը ներառում է մատակարարման շղթայում սառնարանով բեռնատարների օգտագործում՝ այգուց բերքահավաքից հետո Գեղամի պահեստ, Գեղամի պահեստից Արտոյի պահեստ, այդտեղից մաքսային պահեստ և հետագա այլ վայրեր տեղափոխելու համար: Արտահանողները, որպես կանոն, ձգտում են նվազեցնել բեռնատարներով գյուղարտադրանքի տեղափոխման քանակը, որպեսզի խուսափեն փոխադրման և եղանակի պատճառով ապրանքը փչացնելուց, սակայն հաճախ գործող կանոնակարգերը կարող են ի չիք դարձնել Արտոյի այդ ձգտումը: Հայաստանում գյուղարտադրանքի արտահանման վրա ազդող գործոններն են (սառնարանով) բեռնատարների առկայությունն ու դրանցով տեղափոխման գինը: Այդ գործոնները քննարկվում են ստորև.

→ **Սառնարանով բեռնատարների առկայություն/մատչելիություն.** ներկայում Հայաստանում կա մոտավորապես 300 սառնարանով բեռնատար (83 իսկ ծավալով և 20–21 տ տարողությամբ): Սառնարանով բեռնատարների մեծ մասը ՏԻԲ (TIR) կարգավիճակով բեռնատարներ են:¹³ ՏԻԲ փաստաթղթեր ունեցող բեռնատարները սովորաբար անցնում են ավելի դյուրին մաքսային սահմանային

13 Միջազգային ճանապարհային փոխադրումների վերաբերյալ կոնվենցիան (The **TIR Convention** or **International Road Transport Convention**) ընդունվել է ՄԱԿ-ի Երվովայի տնտեսական հանձնաժողովի հովանու ներքո 1975 թ. Ժնևում: Այն կոչված է պարզեցնելու և ներդաշնակեցնելու միջազգային ճանապարհային փոխադրումների վարչական ընթացակարգերը: TIR-ը ստացվել է համապատասխան ֆրանսերեն արտահայտության բառերի առաջին տառերից՝ “Transports Internationaux Routiers” or “International Road Transports”): 2011թ. հունվարի մեկի դրությամբ ՏԻԲ կոնվենցիային միացել էր 68 երկիր: ՏԻԲ կոնվենցիայով սահմանվում է մաքսային տարանցման միջազգային համակարգ՝ առավելագույնս դյուրին կերպով ապրանքներ տեղափոխելու համար (ա) կնքված մեքենաներով և բեռնարկղերով, (բ) մի երկրի առաքման մաքսային մարմնից մինչև մեկ այլ երկրի նշանակման մաքսային մարմին, (գ) միջանկյալ սահմաններում առանց ժամանակատար ու դժվար սահմանային հսկողություն կատարելու, (դ) արդյունավետ ծախսերի վրա հիմնված գներով, (ե) միաժամանակ, մաքսային մարմիններին անվտանգության և երաշխիքների անհրաժեշտ մակարդակ ապահովելով: Վեբ-կայք՝ www.iru.org.

հսկողություն և մեկ-երկու օր ավելի շուտ են հասնում արտահանման վայրեր (օրինակ՝ Մոսկվա), քան ոչ ՏԻԲ մրցակիցները: Հայաստանում տարեկան թողարկվում է շուրջ 1,000 «TIR carnet»-ներ՝ ավտոճանապարհային տեղափոխման համար: Առաքողների և փոխադրողների համաձայն՝ բերքի թեժ ժամանակ (մայիսի վերջից մինչև հոկտեմբերի վերջ) զգացվում է բեռնատարների պակաս:¹⁴ Այդ պակասը լրացվում է օտարերկրյա բեռնատարներով (Թուրքիայից, Վրաստանից, Ուկրաինայից, Բելառուսից և Մոլդովայից): Տեղական բեռնատարների մատակարարումը սահմանափակող խնդիրները կապված են, մասնավորապես, դրամական միջոցների մատչելիության ու բեռնատարների միջազգային լիզինգի հետ (տես Այլ խնդիրներ բաժինը):

→ **Տեղափոխման բարձր գներ.** բերքի թեժ ժամանակ բեռնատարների պակասը տանում է բեռների տեղափոխման գների բարձրացման՝ սակավության և օտարերկրյա բեռնատարների նկատմամբ մուտքի թույլտվությունների վճարների պատճառով (450 ԱՄՆ դոլար): Ինչպես նշվել է վերևում, Երևանից Մոսկվա բեռնատարով (~20 տոննա) ավտոճանապարհով՝ Վրաստան-Ռուսաստան (վերին Լարս-Կազբեկի) սահմանի հատմամբ տեղափոխման վճարը 6,000-6,500 ԱՄՆ դոլար է¹⁵: Եթե մեկից ավելի փոխադրամիջոց է օգտագործվում, ապա այդ գնին ավելանում է լրացուցիչ 1,500 ԱՄՆ դոլար: Գների վրա ազդում է նաև այն, որ հետադարձ ճանապարհին բեռ գտնելու և բեռնվելու համար ժամանակ է պահանջվում, երբեմն մինչև մեկ ամիս:

Հայաստանից միրգ ու բանջարեղենի արտահանում, ինչպես նշվել էր Բաժին II-ի «ՓՈԽԱԴԻՄԱՆ ՈՒՂԻՆԵՐ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐ» ենթաբաժնում, կատարվում է Վրաստանի տարածքով տարանցմամբ: Փոխադրողները նշում են, որ Վրաստանի տարածքով անցնելիս խնդիրների չեն հանդիպում, սակայն մի շարք խնդիրների են հանդիպում Վրաստանի սահմանը Լարսի անցման կետում հատելիս և Փոթի կամ Բաթումի նավահանգիստներում: Խնդիրները կապված են լաստանավերի մատչելիության (երթերի ցածր հաճախություն) և բեռնման ու բեռնաթափման (կարճ՝ բեռնափոխադրման) անարդյունավետ ընթացակարգերով:

→ **Զգձգումներ Լարսի սահմանային անցակետում.** հայաստանյան արտահանողները դժվարությունների են հանդիպում ավտոճանապարհով Լարսի (Վրաստան-Ռուսաստան անցակետ) անցակետով գյուղարտադրանքը Ռուսաստան արտահանելիս: Դժվարությունները կապված են տարանցման ու դրա ընթացակարգի հետ, բացի այդ կարող են առաջանալ ձմռանը առատ ձյան կամ Վրաստան-Ռուսաստան քաղաքական լարվածության պատճառներով կամ այլ գործոններով:

¹⁴ Հայաստանում ՏԻԲ կոնվենցիայի իրականացման համար պատասխանատու է Հայաստանի միջազգային փոխադրողների ասոցիացիան, որը նաև թողարկում է «TIR carnet» թղթեր բեռնատարների համար՝ www.airca.am.

¹⁵ Ռուսաստանի մաքսային սահմանին (Լարսի սահմանային անցակետ) արտահանողներից պահանջվում է նաև 1,000-1,500 ԱՄՆ դոլար ոչ պաշտոնական վճարում կատարել:

- **Լաստանավերի մատչելիությունը և բեռնման ու բեռնաթափման կազմակերպումը Փոթի ու Բաթումի նավահանգիստներում.** Վրաստանի նավահանգիստներից բեռները տեղափոխվում են 6-7 Ուկրաինական և Ռուսական լաստանավերով, որոնց մեկնման գրաֆիկը կանոնավոր և հաճախակի չէ, իսկ բեռների համար տեղեր հատկացվում են հայեցողական կարգով: Ի լրումն դրա, արտահանողները նշում են, որ դժվարություններ կան կապված բեռնման–բեռնաթափման մեքենաների և սարքավորումների պատճառով աշխատանքների ձգձգման հետ: Այս ուղին, որպես այդպիսին, հուսալի չէ արտահանողների համար, քանի որ թույլ չի տալիս ժամանակին առաքում ապահովել:

Բ. Ենթակառույցներ, պահեստավորում և արժեքի ավելացման գործողություններ



Թարմ միրգ ու բանջարեղենը շուտ փչացող ապրանքներ են և դրանց արտահանման համար անհրաժեշտ է սառնարանային տնտեսություն: Սառնարանները թույլ են տալիս միրգ ու բանջարեղենը պահպանել և վաճառել հետագայում ավելի թանկ գնով, երբ թեժ ժամանակն անցել է: Գյուղարտադրանքի արտահանման խթանման համար կարևոր է ոչ միայն սառեցվող տարածք կամ սառնարանային տարողություն ապահովել, այլ նաև պահպանման արդյունավետ սարքավորումներ և եղանակներ, որոնցով կարելի է երկար պահել ապրանքը: Պահպանման ժամանակակից սարքավորումներն ու եղանակները թույլ են տալիս թարմ միրգ ու բանջարեղենը պահպանել մինչև մի քանի ամիս: Բարձրորակ սառնարանային տնտեսությունների հիմնադրումն ու պահպանումը պահանջում է մեծ ներդրումներ, և, այդ պատճառով, դրամական միջոցների մատչելիությունը դառնում է կարևոր հարց, հատկապես փոքր գյուղարտադրողների համար:¹⁶

→ **Սառնարանային տնտեսությունների առկայություն.** վերջին տարիների ընթացքում փոքր գյուղարտադրողները, (որոնք հաճախ գործում են կոոպերատիվների միջոցով), հատկապես թարմ միրգ արտադրողները իրենց տարածքներում հիմնադրել են սառնարանային պահեստներ: Դրանց մեծ մասը փոքր պահեստներ են, պարզունակ սարքավորումներով, ընդ որում՝ սարքավորումների մեծ մասը հնացած ու մաշված է: Վերջին տարիներին բարձրակարգ սառնարանային տնտեսություններ են ստեղծվել Զվարթնոց օդանավակայանում և Երևանում: Այդ պահեստներն ունեն տարբեր տարողություններ: Օդանավակայանի պահեստներն ունեն մոտ 600 քմ տարածք և կարող են տեղավորել մոտ 140 տոննա գյուղարտադրանք: Միջազգային կառույցները նույնպես նպաստ են ունեցել այդ գործում: Մասնավորապես, ՀՄՀ Հայաստան ծրագրի համաձայն՝ Հայաստանի տարբեր շրջաններում ստեղծվել են թարմ միրգ ու բանջարեղենի հավաքման 21 կետեր և գյուղարտադրանքի կենտրոնացման 3 կետեր: Կատարված ներդրումների շնորհիվ մեծացել է սառը պահեստավորման կարողությունը, սակայն եթե Հայաստանը նպատակ ունի զգալիորեն մեծացնելու իր արտահանման ծավալը, ապա կարիք կլինի սառնարանային պահեստների ավելացման: Այդ առումով, Հայաստանի կառավարությունը մտադիր է Զվարթնոց օդանավակայանում ստեղծել Ազատ տնտեսական գոտի, որը ծրագրվում է

¹⁶ Սույն վերլուծության շրջանակում ենթակառուցվածքների համապարփակ ուսումնասիրություն չի կատարվել:

օգտագործել նաև գյուղարտադրության արտահանման համար՝ նպաստելով ավելի բարձր արժեք ստեղծելու կարողությունների մեծացմանը:

→ **Արժեքի ավելացման գործողություններ.** Ինչպես նշվել է վերևում, Հայաստանում գյուղարտադրությունը շատ մասնատված է՝ ավելի քան 330,000 փոքր տնտեսությունների առկայությամբ՝ միջինում 1.4 հեկտար հողով: Մրգերի արտադրության մասնատված կառուցվածքը բարդացնում և դժվարացնում է փաթեթավորման, փոխադրման, տեղափոխման և վաճառքի կազմակերպման և ՆՅՈՒՏ ապահովման գործը: Այդ պարագայում խնդրահարույց է դառնում արժեքի ավելացման այնպիսի պարզ գործողություն, ինչպիսին որակյալ փաթեթավորման և արկղերի ապահովումն է, ինչը կարևոր է մրգերը նրբորեն փոխադրելու և դրանց քիչ ձեռք տալու համար:

Գ. Մաքսային հսկողություն



Մաքսային ձևակերպումների սահուն և արագ ընթացակարգը խիստ կարևոր է գյուղարտադրության առաջնության համար: Վերջին տարիներին Հայաստանի կառավարությունն իրականացրել է բարեփոխումներ՝ ուղղված մաքսային ձևակերպումների ընթացակարգի պարզեցմանը, սակայն դեռևս առկա են մի շարք խնդիրներ, որոնք հարկ է լուծել արտահանման դյուրինացման համար.

- **Ապրանքների փոխադրում մաքսային հսկողության ժամանակ.** ըստ արտահանողների, ներկա մաքսային ընթացակարգերով պահանջվում է, որ այգում միրգ ու բանջարեղենի բեռնման ժամանակ մաքսային տեսուչը ներկա լինի: Մաքսային տեսուչի ներկայությամբ գյուղարտադրանքը կշռվում է և բեռնվում, կատարվում է նշում բեռի կշռի վերաբերյալ, և մեքենան կնքվում է: Մաքսային հսկողությունը այգում կատարելու իմաստն այն է, որ թարմ միրգ ու բանջարեղենին հնարավորինս քիչ ձեռք տան կամ շարժեն: Սակայն, հաճախ կշռման ընթացակարգը կրկնվում է մաքսատանը կամ մաքսային սահմանի վրա, ընդ որում՝ միրգ ու բանջարեղենը կարող են բեռնաթափվել և նորից բեռնվել: Թարմ միրգ ու բանջարեղենի կրկնակի կշռումը հանգեցնում է ապրանքի կորստի և վնասմանը, ինչպես նաև մեծացնում է փչացման հավանականությունը: Վիճակն ավելի է բարդացնում այն հանգամանքը, որ կշռի փոքր տարբերությունը (ինչը կարող է հետևանք լինել կշռի բնական կորստի) կարող է հանգեցնել ծանր պատիժների: Չնայած այն բանին, որ չկան իրավական դրույթներ հայտարարված և իրական կշիռների թույլատրելի տարբերության վերաբերյալ, Մաքսային մարմինը գործնականում կիրառում է 400 կգ սահմանաչափ:
- **Ծագման երկրի հավաստագրի պահանջ.** ի լրումն արտահանման համար պահանջվող փաստաթղթերի (տրանսպորտային փաստաթուղթ, հաշիվ-ապրանքագիր, անհրաժեշտ հավաստագրեր կամ թույլտվություններ), Մաքսային մարմինն արտահանողներից պահանջում է ներկայացնել ապրանքի՝ Հայաստանում ծագած լինելու ապացույցներ, նույնիսկ այն դեպքերում, երբ դրա համար իրավական պահանջ չկա և ներմուծող երկիրը չի պահանջում:¹⁷ Ծագման հավաստագիր պահանջելու հնարավոր

¹⁷ Փաստաթղթային պահանջները սահմանված են ՀՀ կառավարության թիվ 1779 որոշմամբ, և այդ որոշման մեջ չկա պահանջ՝ ներկայացնելու ծագման հավաստագիր:

պատճառներից մեկը կապված է ԱԱՀ-ի հետ վերադարձման կամ շահութահարկի (եկամտահարկի) հաշվարկման հետ: Նման պահանջն ազդում է մաքսագերծման ընթացակարգի վրա երկու ձևով՝ նախ, արտահանողները պետք է անցնեն ապրանքի ծագման հավաստագրման բարդ ընթացակարգով (մանրամասները ներկայացված են Տեխնիկական հսկողության բաժնում) և, երկրորդ, մաքսագերծման գործընթացը հետաձգվում է, եթե Հայաստանի առևտրա-արդյունաբերական պալատը (ՀԱԱՊ) չի աշխատում: ՀԱԱՊ-ն աշխատում է մինչև ժամը 18:00 և չի աշխատում շաբաթ և կիրակի օրերին: Ամառվա թեժ ժամանակ դա խանգարում է օրը 24 ժամ շաբաթը 7 օր աշխատող թարմ միրգ ու բանջարեղեն արտահանողներին: Մաքսային մարմինը չի մաքսագերծում ապրանքները, եթե ծագման հավաստագիրը չի ներկայացվել:

→ **Թարմ միրգ ու բանջարեղենի արտահանման համար պահանջվող փաստաթղթեր.** ի լրումն հաշիվ ապրանքագրի, տրանսպորտային փաստաթղթի (CMR) և ծագման հավաստագրի Մաքսային մարմինը Արտոյից պահանջում է ներկայացնել փաստաթղթերի մեկ այլ փաթեթ, որը ներառում է.

- Պայմանագիր գյուղարտադրանքի առուվաճառքի վերաբերյալ (Արտոյի և Գեղամի միջև),
- Ելքի դրամարկղային օրդեր,
- Գնման ակտ՝ Գեղամի և Արտոյի միջև,
- Տեղեկանք Գեղամի կողմից մշակվող գյուղատնտեսական հողատարածքների և մշակաբույսերի վերաբերյալ, որը տալի է գյուղապետը,
- Գեղամի անձնագրի պատճենը:

Այդ փաստաթղթերը ներկայացնելու իրավական պահանջ չկա, սակայն գործնականում Արտոյից պահանջվում է ներկայացնել դրանք՝ ինչպես ծագման երկրի հավաստագրման, այնպես էլ մաքսային ձևակերպումների համար: Ընթացակարգերը ժամանակատար ու դժվար են և ազդում են առաքումների արժեքի վրա՝ ապրանքի կորստի (քանի որ շուտ փչացող է) և տեղափոխման ավելորդ ծախսերի պատճառով: Փաստաթղթային նման պահանջ ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ տրվող բացատրությունները վերաբերում են հարկային հսկողության իրականացմանը, մասնավորապես (ա) ԱԱՀ-ի հետ վերադարձման և ԱԱՀ-ի շեմի հարցեր, (բ) ուղղակի հարկման, այսինքն՝ շահութահարկի հարկման բազայի որոշման հարցեր, (գ) մաքսային վիճակագրության վարում, (դ) ապրանքների մաքսային արժեքի որոշման հարցեր: Սույն հուշագրի սահմաններում այդ պատճառները լիարժեքորեն չեն ուսումնասիրվել, և այդ խնդրի հետագա ուսումնասիրության կարիք կա:

→ **Մաքսային արժեքի որոշման խնդիր.** Ըստ Արտոյի և Առաքելի՝ Մաքսային մարմինը արտահանվող թարմ միրգ ու բանջարեղենի նկատմամբ կիրառում է այսպես կոչված «կողմնորոշիչ գներ»: Հաճախ կողմնորոշիչ գները ավելի բարձր են Արտոյի

հայտարարագրած գնից, ինչը նշանակում է, որ Արտոն ստիպված է ներկայացնել նոր փաստաթղթեր (առուվաճառքի պայմանագիր, գնման ակտ, ելքի դրամարկղային օրդեր, հաշիվ ապրանքագիր, մաքսային հայտարարագիր) որտեղ կիրառված է «կողմնորոշիչ գինը»: Բարձր կողմնորոշիչ գնի կիրառման պատճառով մեծանում են արտահանման երկրում (օրինակ՝ Ռուսաստանում) Արտոյի կատարելիք հարկերն (ԱԱՀ) ու վճարումները, իսկ արտահանվող ապրանքի գնային մրցունակությունն ու վաճառքի ծավալները ընկնում են: Այս գործելակերպի պատճառները նման են նախորդ կետում քննարկվածներին, և այս խնդրի հետագա ուսումնասիրության կարիք կա:

Դ. Տեխնիկական հսկողություն




Տեխնիկական հսկողության ընթացակարգերը էական նշանակություն ունեն գյուղարտադրանքի և սննդամթերքի արտահանման համար, քանի որ դրանցով հավաստվում են ապրանքների որակն ու անվտանգությունը, և հաճախ այդպիսի հսկողությունը պահանջում է ներմուծող երկիրը: Միաժամանակ, թարմ միրգ ու բանջարեղենի շուտ փչացող բնույթը պահանջում է, որ հսկողության համակարգը սահուն և ժամանակին աշխատի, և կարողանա հավասարակշռել հսկողության արագությունն ու անվտանգության պատշաճ մակարդակը: Հայաստանում արտահանվող միրգ ու բանջարեղենը ենթակա են բուսասանիտարական հսկողության: Դրանք պետք է ուղեկցվեն բուսասանիտարական հավաստագրով: Բուսասանիտարական հսկողությունն իրականացվում է մեքենայի բեռնման կետում կամ մաքսային սահմանային անցակետում: Միրգ ու բանջարեղենի արտահանումը կատարվում է համաձայն ներմուծող երկրի, այսինքն՝ արտահանման երկրի բուսասանիտարական պահանջների: Միրգ ու բանջարեղեն արտահանելու համար Արտոն պետք է դիմի Բուսասանիտարական տեսչություն (որը գործում է Հայաստանի Սննդամթերքի անվտանգության ծառայության (ՀՄԱԾ) կազմում): Դիմումը պետք է պարունակի տեղեկություններ Արտոյի, արտահանվող ապրանքի ու դրա ծավալի մասին, արտահանման երկրի և նշանակման վայրի մասին, ներմուծողի, արտահանման երկիր մուտք գործելու անցակետի մասին: Բուսասանիտարական հավաստագիր տրամադրելու համար տեսուչը սովորաբար կատարում է բեռի ֆիզիկական զննում: Ընդհանուր առմամբ, շատ քիչ արտահանողներ են այդ ընթացակարգը համարում խնդրահարույց:

→ **Ծագման երկրի հավաստագրման ընթացակարգ.** Չնայած այն բանին, որ ծագման երկրի հավաստագրման ընթացակարգը բարելավվել է ոչ վաղուց, այն դեռ շարունակում է խնդրահարույց մնալ թարմ միրգ ու բանջարեղեն արտահանողների համար: Ընթացակարգը ներառում է փաստաթղթային բավականին բարդ պահանջներ: Արտահանվող ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի համար Արտոն պետք է ծագման հավաստագիր ձեռքբերի, ինչի համար պետք է ներկայացնի փաստաթղթերի փաթեթ (նկատենք, որդա մաքսագերծման համար Մաքսային ծառայության պահանջած նույն փաթեթն է):

- Պայմանագիր գյուղարտադրանքի առուվաճառքի վերաբերյալ (Արտոյի և Գեղամի միջև),
- Ելքի դրամարկղային օրդեր,
- Գնման ակտ՝ Գեղամի և Արտոյի միջև,
- Տեղեկանք Գեղամի կողմից մշակվող գյուղատնտեսական հողատարածքների և մշակաբույսերի վերաբերյալ, որը տալի է գյուղապետը,
- Գեղամի անձնագրի պատճենը,
- Հաշիվ-ապրանքագիր:

→ **Սննդամթերքի անվտանգության պահանջներ միրգ ու բանջարեղենի համար. բուսասանիտարական հսկողությանը զուգահեռ միրգ ու բանջարեղենը ենթակա են սննդամթերքի անվտանգության հսկողության,** որը Հայաստանում դեռևս լայնորեն չի կիրառվում: Սննդամթերքի անվտանգության հսկողության լիարժեք կիրառման դեպքում՝ թարմ միրգ ու բանջարեղենը ենթակա կլինեն երկու տեսակ հսկողության. բուսասանիտարական՝ բույսերի կարանտին հիվանդությունների մուտքի կանխման համար, և սննդամթերքի անվտանգության հսկողություն՝ միրգ ու բանջարեղենի վրա ու մեջ պարարտանյութի և այլ քիմիական նյութերի քանակների նկատմամբ: ՀՍԱԾ-ն ծրագրում է մոտ ապագայում սկսել միրգ ու բանջարեղենի նկատմամբ սննդամթերքի անվտանգության հսկողության լայն կիրառումը: Այդ դեպքում սննդամթերքի անվտանգության հսկողության ընթացակարգերը պետք է մշակվեն հատուկ ուշադրությամբ, որպեսզի հնարավոր լինի հավասարակշռել ընթացակարգի դյուրինությունն ու սննդամթերքի անվտանգության պատշաճ մակարդակը:

Ե. Ներդրանքի ներմուծում գյուղատնտեսության համար




Մրցունակ արտահանման համար շատ կարևոր է ապահովել արտահանվող գյուղատնտեսական արտադրության համար մրցունակ ներդրանքի ներմուծում, ներառյալ՝ սերմեր և տնկիներ, պարարտանյութեր և միջատասպան և այլ թունաքիմիկատներ, մեքենաներ, սարքավորումներ ու գործիքներ: Ներմուծվող ներդրանքի մրցունակության վրա ազդող գործոնների թվում են գրանցման և լիցենզավորման պահանջները, մաքսային և տեխնիկական հսկողության ընթացակարգերը, շուկայի կառուցվածքն ու մրցակցության գործելակերպերը, առևտրականների և այլ տնտեսվարողների կիրառած շուկայավարման և զարգացման ռազմավարությունները: Հայաստանյան ներմուծողները դժվարությունների են հանդիպում միջատասպան և այլ թունաքիմիկատների և սերմերի ներմուծման ընթացակարգերում:

→ **Միջատասպան և այլ թունաքիմիկատների ներմուծման ընթացակարգերը** խնդրահարույց են և տնտեսվարողներին պատճառում են լրացուցիչ ծախսեր ու ժամանակի կորուստ, ինչն ի վերջո անդրադառնում է շուկայում այդ ապրանքների գործող գների վրա: Յուրաքանչյուր խմբաքանակ ներմուծելու համար ներմուծողը պետք է թույլտվություն (եզրակացություն) ստանա ՀՄԱԾ-ից (Բուսասանիտարական տեսչություն): Ընթացակարգերը ներառում են երկար ու բազմակի ուղևորություններ և այցելություններ Գյուղատնտեսության նախարարության կառուցվածքում գործող մարմիններ, որոնք գտնվում են Երևանի տարբեր կողմերում, միմյանցից մեծ հեռավորությունների վրա, նմուշառման և փորձաքննության բարդ գործընթացներ: Այդ ընթացակարգերը կրկնվում են յուրաքանչյուր խմբաքանակի ներմուծման համար: Ներմուծողը պետք է մի քանի անգամ այցելի ՀՄԱԾ-ի տարբեր ստորաբաժանումներ (որոնք գտնվում են Երևանի տարբեր մասերում), ինչպես նաև երեք անգամ այցելի մաքսային պահեստ մինչև իր ապրանքի մաքսագերծումը: Ընդ որում՝ այդ ընթացքում բեռը մնում է մաքսային պահեստում, այսինքն՝ բեռը չի մաքսագերծվում մինչև տեխնիկական հսկողության ընթացակարգերի ավարտը: Ընթացակարգի քայլերի քարտեզն ու ներմուծողի տեղաշարժի քարտեզը տես 2–րդ հավելվածում:

- **Սերմերի ներմուծման ընթացակարգեր.** սերմեր ներմուծողները հանդիպում են նմանատիպ դժվարությունների, ինչպիսիք նշվեցին թունաքիմիկատների ներմուծման համար: Ի լրումն տարբեր մարմիններ այցելելու, նմուշառման և փորձաքննության հետ կապված խնդիրներին, սերմերի ներմուծման ժամանակ կա ծլունակության ստուգման ընթացակարգ, որը կարող է տևել մի քանի օր (մինչև 7 օր): Ընդ որում՝ այդ ընթացքում բեռը մնում է մաքսային պահեստում, այսինքն՝ բեռը չի մաքսագերծվում մինչև տեխնիկական հսկողության ընթացակարգերի ավարտը:
- **Ազոտական պարարտանյութի ներմուծում.** Վրաստանը չի թույլատրում իր տարածքով ազոտական պարարտանյութի՝ սելիտրայի, տեղափոխում (հիմնավորումներից մեկը դրա պայթունավտանգությունն է) դեպի Հայաստան: Հայաստանը ստիպված ներմուծում է վրացական արտադրության սելիտրան (որի նկատմամբ Վրաստանը կիրառում է քանակական սահմանափակում): Որոշ տնտեսվարողներ նշում են, որ կարող են ներմուծել ավելի որակյալ և էժան պարարտանյութ այլ երկրներից, սակայն զրկված են այդ հնարավորությունից:

Զ. Գյուղարտադրության, հարկային և դրամի մատչելիության հարցեր



Արտահանման ՆՅՈՒՏ ապահովման խնդիրներին զուգահեռ, գյուղարտադրանք արտահանողները հանդիպում են նաև մի շարք այլ խնդիրների, որոնք կապված են ագրոբիզնեսի, հարկման, դրամական միջոցների մատչելիության հետ: Դրանք հակիրճ ներկայացված են ստորև.

- Գյուղարտադրանքի որակը և դրա կապը միջազգայնորեն ընդունված ստանդարտների հետ, ինչպիսիք են Պատշաճ գյուղատնտեսական պրակտիկան, վտանգի աղբյուրների վերլուծության և կրիտիկական կետերի հսկման համակարգը (ՎԱՎԿԿՀ համակարգ, HACCP) և(կամ) դրանց առնչվող ISO ստանդարտները:
- Բավարար ուշադրություն չի դարձվում արտահանման շուկաներում գյուղարտադրանքի շուկայավարությանը, պահանջարկի ուսումնասիրությանը և գործողությունների ծրագրմանը: Արտոյի հետ նախնական քննարկումները ցույց են տալիս, որ նա կիրառում է ապրանքի շուկայահանման պարզունակ եղանակներ ու գործիքներ: Բավարար ուշադրություն չի հատկացվում նաև բաշխման ցանցերի հաստատմանը և եղածների օգտագործմանը, ինչպես նաև շուկաների ընդլայնմանը:
- Արտահանման երկրներում կիրառվող տեխնիկական հսկողությանն առնչվող պահանջների վերաբերյալ տեղեկությունների պակասը խանգարում է արտահանման զարգացմանը, որովհետև Գեղամը և Արտոն տեղյակ չեն, թե ինչ պարարտանյութի և թունանյութերի քանակի նկատմամբ ինչ սահմանափակումներ են գործում արտահանման երկրներում և կարող են արգելքների հանդիպել:
- Խնդիրներ, որոնք կապված են Հայաստանում գործող ստանդարտների համապատասխանությանը միջազգային ստանդարտներին և դրանց ընդունելիությունը արտահանման շուկաներում: Հայաստանում տրված բուսասանիտարական հավաստագիրն ընդունվում է Ռուսաստանում, Ուկրաինայում և ԱՊՀ-ի այլ երկրներում: Սակայն այդ երկրների հետ դեռ փոխադարձ ճանաչման

համաձայնագրեր չեն կնքվել սննդամթերքի անվտանգության հավաստագրման առնչությամբ: Ապագայում դա կարող է խոչընդոտներ ստեղծել Հայաստանյան արտադրանքի արտահանման համար:

- Գեղամին միրգ ու բանջարեղենի բերքահավաքի և պահպանման կատարելագործված եղանակների ուսուցման խնդիր. Գեղամը և Արտոն հաճախ շարունակում են դեռ հետևել բերքահավաքի և պահպանման հին ավանդական եղանակներին, չնայած դրանք արդյունավետ չեն: Օրինակ՝ Գեղամն ու Արտոն պնդում են, որ ծիրանը, որը արտահանման կարևոր ապրանք է, կարելի է պահել ամենաշատը մեկ շաբաթ, այն դեպքում, երբ շատ կազմակերպություններ կիրառում են հավաքման և պահպանման եղանակներ, որոնք թույլ են տալիս ծիրանը պահել մինչև մեկ ամիս և ավել:
- Տեղեկատվական խնդիր. արտադրության ծավալների, ծրագրված արտադրության ու դրա տեղի վերաբերյալ ամբողջական և ժամանակին տեղեկությունների բացակայությունը բացասաբար է ազդում ապրանքների մատակարարման կայունության վրա:
- Արտահանման ժամանակ մաքսային հայտարարագրի արժեքն օգտագործվում է որոշելու Արտոյի հարկային վիճակը (քանի որ շրջանառության 58 մլն ՀՀ դրամ շեմն անցնելուց հետո Արտոն դառնում է ԱԱՀ վճարող): Խնդիրները կապված են նաև եկամուտների որոշման (գնահատման) և ուղղակի հարկերի որոշման հետ:
- Ագրոբիզնեսի արտահանման խթանման ռազմավարության բացակայություն. այդ ռազմավարության բացակայությունը նշանակում է նաև, որ միավորող հենք ու գործակառույց (մեխանիզմ) չկան արտահանման խոչընդոտների նվազեցման կամ վերացման համար, ներառյալ՝ առևտրի ՆՅՈՒՏ ապահովման շղթայում եղած խոչընդոտները: Դա կարող է հանգեցնել տարբեր մարմինների կողմից հետապնդվող նպատակների բախման, ինչպես նաև դժվարացնել առաջնահերթությունների սահմանման գործը: Ռազմավարությամբ պետք է, այլոց հետ նաև, հասցեագրվեն այնպիսի հարցեր, ինչպիսիք են թարմ արտադրանքի արտահանման խթանման հայեցակարգային ուղղությունների որոշումն ու զարգացումը, օրինակ՝
 - Ջերմոցային տնտեսությունների զարգացում (որպեսզի բերքի վաղ շրջանում Ռուսաստանի թարմ արտադրանքի շուկա հասցվի թարմ միրգ ու բանջարեղեն)
 - Սառնարանային տնտեսությունների (թարմ արտադրանքի պահպանման համար) և սառը տեղափոխման շղթայի զարգացում (տեղափոխման և արտահանման համար)
 - Խորը սառեցման շղթայի զարգացում (պահանջում է մեծ ներդրումներ ամբողջ շղթայով մեկ, հաճախ կարիք է լինում օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման):
- Միջատասպանների և այլ թունաքիմիկատների վաճառքի նկատմամբ գործող պահանջներ. ըստ տնտեսվարողների՝ թունաքիմիկատների վաճառքի (խանութների և դրանք շրջապատող տարածքի) նկատմամբ սահմանված ներկա պահանջները խիստ սահմանափակող են և հաճախ իրագործելի չեն: Դա վերաբերում է, մասնավորապես, թունաքիմիկատների ատրահոսքի

կանխման նպատակով՝ խանութների առանձնացման և մեկուսացման պահանջին՝ յուրաքանչյուր կողմից 50 մ տարածք ունենալու պահանջին:

- Առևտրային քաղաքականության հարցեր. օրինակ՝ Վրաստան խաղողի արտահանումն արգելելու դեպքեր:
- Դրամական միջոցների մատչելիության խնդիր. Արտոն դժվարությունների է հանդիպում ընթացիկ կապիտալի (աշխատող դրամի) պակասի պատճառով, որովհետև Գեղամին վճարում է կանխիկ դրամով: Դրամ գտնելու հարցում Արտոն նշում է հետևյալ խնդիրները. (1) ագրոֆիզնեսի բարձրոժիսկայնությունը, (2) բարձր տոկոսադրույքներն ու կարճաժամկետ վարկեր վերցնելու բարդ ընթացակարգերը, (3) գրավադրման հետ կապված դժվարությունները: Արտոն և Առաքելը նշում են նաև, որ դժվար է դրամ գտնել բեռնատարներ, սառնարանային տնտեսության և այլ սարքավորումներ ձեռքբերելու համար: Նշվում է, որ գործող օրենսդրությունը թույլ չի տալիս միջազգային լիզինգի գործարքներ իրականացնել, ինչն ավելի է դժվարացնում առևտուրը:

IV. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐ

	Խնդիր կամ դիտարկում	Խնդրի ազդեցությունը	Հետագա քայլ (ՀՔ) կամ Առաջարկություն (Ա)	IFC-ի առաջարկվող ներդրումը	Ժամկետ և կատարող մարմին	Նկատառում կամ հետագա աշխատանք
Արտաքին առևտրի ՆՅՈՒՏ ապահովում						
1	Մաքսային ձևակերպումների ժամանակ Մաքսային ծառայության կողմից ծագման երկրի հավաստագրի (ԾԵՀ) պահանջ, ի լրումն այն երեք փաստաթղթերի, որոնք պահանջվում են ԿՈՐ-ով (թիվ 1779, 21.11.2003)՝ - Մաքսային հայտարարագիր - Հաշիվ ապրանքագիր - Ապրանքատրասպորտային բեռնագիր	Լրացուցիչ փաստաթղթի պահանջ է: Հանգեցնում է ժամանակի և դրամի կորստի: Հաճախ հանգեցնում է ուշացումների, քանի որ ՀԱԱՊ-ը աշխատում է մինչև 18:00, իսկ շաբաթ և կիրակի օրերին չի աշխատում:	(Ա) 1. Մաքսային հետ քննարկել, թե որն է այդ թուղթը պահանջելու պատճառը (այն դեպքում, երբ այդպիսի իրավական պահանջ չկա) և առաջարկել հանել այդ պահանջը: 2. Տնտեսվարողների շրջանում անցկացնել իրազեկման աշխատանք՝ արտահանման համար պահանջվող փաստաթղթերի վերաբերյալ:	Հետագա ուսումնասիրություն և խնդրի լուծման առաջարկություններ IFC-ի կողմից	Մաքսային ծառայություն	Այդ թղթի պահանջը իրավականորեն արդեն չկա (ԿՈՐ թիվ 1779, 21.11.2003), սակայն Մաքսային գործնականում շարունակում է պահանջել այդ թուղթը: Իրավական ակտ՝ ԿՈՐ թիվ 1779 (21.11.2003), ԿՈՐ թիվ 236 (24.03.2001)
2	Փաստաթղթային լրացուցիչ բարդ պահանջներ Մաքսային ծառայության կողմից արտահանման ժամանակ մաքսային ձևակերպումների համար: Մաքսայինը պահանջում է ստորև նշված 9 փաստաթուղթ, որոնցից միայն առաջին երեքն են սահմանված ԿՈՐ-ով (թիվ 1779, 21.11.2003): Ներկայում Արտոյից պահանջում են հետևյալ թղթերը. - Մաքսային հայտարարագիր - Հաշիվ ապրանքագիր (Արտոյի և արտերկրում ներմուծողի միջև) - Ապրանքատրանսպորտային բեռնագիր - Ծագման երկրի հավաստագիր - Առուվաճառքի պայմանագիր (Արտոյի և Գեղամի միջև) - Ելքի դրամարկային օրդեր - Գնման ակտ - Գյուղապետի թուղթ	Դժվարին ու երկար ընթացակարգ է, որը հանգեցնում է ապրանքի կորստի (քանի որ այն շուտ փչացող է) և տեղափոխման ավելորդ ծախսերի:	(Ա) 1. Ուսումնասիրել իրավական հենքը և քննարկել Մաքսայինի հետ, թե արդյոք այդ թղթերն անհրաժեշտ են: Կատարել առաջարկ՝ հանելու այդ պահանջը: 2. Մշակել ռիսկի հատուկ պրոֆիլներ միրգ ու բանջարեղենի արտահանողների համար, 3. Ուսումնասիրել ՀԱԱՊ-ի և Մաքսայինի միջև տեղեկությունների փոխանակման համակարգի ներդրումը, ինչը կօգնի խուսափել նույն թղթերը պահանջելուց և գործողությունների կրկնողությունից:	IFC-ն կատարում է հետագա ուսումնասիրություն և կատարում առաջարկություններ	Մաքսային ծառայություն, ՀԱԱՊ, Էկոնոմնախ	4-9-րդ թղթերի պահանջը իրավականորեն չկա ԿՈՐ թիվ 1779 (21.11.2003), սակայն Մաքսայինը գործնականում շարունակում է պահանջել: Մաքսայինը նշում է, որ այդ թղթերը պետք են հարկային նպատակներով, այն դեպքում, երբ Հարկայինը նշում է, որ այդ թղթերը պետք չեն: Նկատենք, որ 5-9-րդ թղթերի նույն փաթեթը պահանջում է նաև ՀԱԱՊ-ը ԾԵՀ տալու համար. Իրավական ակտ՝

	Խնդիր կամ դիտարկում	Խնդրի ազդեցությունը	Հետագա քայլ (ՀՔ) կամ Առաջարկություն (Ա)	IFC-ի առաջարկվող ներդրումը	Ժամկետ և կատարող մարմին	Նկատառում կամ հետագա աշխատանք
	9. Գեղամի անձնագրի պատճենը					ԿՈՐ թիվ 1779 (21.11.2003), ԿՈՐ թիվ 236 (24.03.2001), ԿՈՐ թիվ 1772 (30.12.2010)
3	Արտահանվող թարմ միրգ ու բանջարեղենի նկատմամբ այսպես կոչված «կողմնորոշիչ գների» կիրառում Մաքսային կողմից: Դա կապված է ԱԱՀ-ով և շահութահարկով (եկամտահարկով) հարկման հետ՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ արտահանման երկրում: Տես հարկայինին վերաբերող մասերը:	Գների բարձրացում և արտահանման շուկայում հայկական ապրանքի մրցունակության անկում: Դժվարին ընթացակարգ է, որը հանգեցնում է ապրանքի կորստի (քանի որ շուտ փչացող է) և տեղափոխման ավելորդ ծախսերի:	(ՀՔ) Միջազգային լավագույն փորձի վրա հիմնվելով հատկորոշել արտահանվող թարմ արտադրանքի արժեքի գնահատման եղանակ:	IFC-ն կարող է ներգրավել համապատասխան փորձագիտություն	Մաքսային ծառայություն Հարկային ծառայություն Էկոնոմնախ	Արտոն նշում է, որ իրենից պահանջվում է փոխել առուվաճառքի պայմանագիրը և այլ թղթերը, ինչպես նաև հաշիվ ապրանքագիրը, այնպես, որ դրանցում գները փոքր չլինեն կողմնորոշիչ գներից:
4	Գյուղատնտեսության կրկնակի կշռման խնդիր: Մաքսային տեսուչը վճարի դիմաց ներկա է գտնվում այգում միրգ ու բանջարեղենի բեռնման ընթացքում: Բեռնատարը կշռվում ու բարձվում է և դրանից հետո կնքվում: Սակայն, հաճախ կշռման ընթացակարգը կրկնվում է մաքսատանը կամ մաքսային սահմանի վրա, ընդ որում՝ միրգ ու բանջարեղենը կարող է բեռնաթափվել և նորից բեռնվել: Վիճակն ավելի է բարդանում այն բանով, որ կշռի փոքր տարբերությունը (ինչը կարող է հետևանք լինել կշռի բնական կորստի) կարող է հանգեցնել ծանր պատիժների:	Թարմ միրգ ու բանջարեղենի կրկնակի կշռումը հանգեցնում է ապրանքի կորստի և վնասման և մեծացնում է փչացման հավանականությունը:	(Ա) 1. Ռիսկերի գնահատման հիման վրա սահմանել թղթերում նշված և իրական կշիռների տարբերության առավելագույն սահման: 1. Եթե կա կշռման ընթացակարգը սահմանող իրավական ակտ, ապա մատչելի և հասանելի դարձնել տնտեսվարողների համար: Եթե չկա այդպիսի ընթացակարգ, ապա պատշաճ իրավական ակտով սահմանել կշռման հստակ ընթացակարգ: 3. Մշակել ռիսկի հատուկ պրոֆիլներ միրգ ու բանջարեղենի արտահանողների համար, որոնց կիրառմամբ կկրճատվի ֆիզիկական ստուգումների հաճախականությունը, ինչպես նաև բարեխիղճ արտահանողների	IFC-ն կատարում է առաջարկություն և օգնում Մաքսայինին նախագծելու փոփոխությունները:	Մաքսային ծառայություն	Մաքսայինը նշում է, որ թույլատրելի է համարում թղթերում նշված և իրական կշիռների մինչև 400 կգ տարբերություն: Սակայն Արտոն նշում է, որ այդ սահմանաչափն անհամեմատ փոքր է (20-100կգ): Իրավական ակտ՝ ԿՈՐ թիվ 236 (24.03.2001) Հնարավոր է գերատեսչական ներքին այլ հրազանգ կամ հրաման կա, որը մենք չունենք:

	Խնդիր կամ դիտարկում	Խնդրի ազդեցությունը	Հետագա քայլ (ՀՔ) կամ Առաջարկություն (Ա)	IFC-ի առաջարկվող ներդրումը	Ժամկետ և կատարող մարմին	Նկատառում կամ հետագա աշխատանք
5	Փաստաթղթային բարդ պահանջներ ծագման երկրի հավաստագրման (ԾԵՀ) համար: Ներկայում ՀԱԱՊ-ը Արտոյից պահանջում է ներկայացնել. 1. Առուվաճառքի պայմանագիր (Արտոյի և Գեղամի միջև) 2. Ելքի դրամարկային օրդեր 3. Գնման ակտ 4. Գյուղապետի թուղթ 5. Գեղամի անձնագրի պատճենը 6. Հաշիվ ապրանքագիր (Արտոյի և արտերկրում ներմուծողի միջև)	Դժվարին ու երկար ընթացակարգ է, որը հանգեցնում է ապրանքի կորստի (քանի որ շուտ փչացող է) և տեղափոխման ավելորդ ծախսերի:	(Ա) Կատարել փոփոխություններ համապատասխան իրավական ակտում՝ պարզեցնելու և նվազեցնելու ԾԵՀ-ի համար թղթային պահանջները	IFC-ն կատարում է առաջարկություն և օգնում Էկոնոմնախին և ՀԱԱՊ-ին նախագծելու փոփոխությունները:		Նկատենք, որ, այլ թղթերի հետ մեկտեղ, նույն փաթեթը Արտոյից պահանջում է նաև Մաքսայինը: Իրավական ակտ՝ ԿՈՐ թիվ 1772 (30.12.2010)
6	ՀԱԱՊ-ի աշխատանքային ժամերի հարցը: ՀԱԱՊ-ն չի աշխատում շաբաթ-կիրակի և 18:00 հետո, ինչը խնդիրներ է հարուցում Արտոյի համար: Եթե նույնիսկ մաքսայինը կատարի մաքսազերծումը, որոշ երկրներ պահանջում են ծագման վերաբերյալ թղթերը:	Բեռը կորցնում է իր արժեքը ուշացումների, ինչպես նաև հաճախորդի կողմից հնարավոր մերժման պատճառով:	(Ա) Կատարել փոփոխություններ համապատասխան իրավական ակտում՝ իրավունք տալու ՀԱԱՊ-ին աշխատել շաբաթ-կիրակի օրերին, 18:00 հետո և դրա դիմաց վճար գանձել:	IFC-ն աջակցում է շահագրգիռ կողմերի մասնակցությամբ համատեղ քննարկումներ կազմակերպելու և հնարավոր լուծումներ գտնելու գործում:	ՀԱԱՊ և Էկոնոմնախ	ՀԱԱՊ-ը նշում է, որ լրացուցիչ վճարի դիմաց պատրաստ է աշխատել աշխատանքային ժամերից դուրս, շաբաթ և կիրակի օրերին: Հայաստանում կա օրինակ, երբ մաքսային տեսուչը արտահանողի կամ ներմուծողի տարածք է այցելում աշխատանքային ժամերին և աշխատանքային ժամերից դուրս՝ Իրավական ակտ՝ ԿՈՐ թիվ 1772 (30.12.2010)
7	Գյուղատնտեսական կուտակման հետ կապված խնդիրներ. տնտեսությունները փոքր են՝ 340,000 տնտեսություն 4,000 ք.մ և 2 հեկտար հողով, ինչը դժվարացնում է թարմ արտադրանքի հավաքման, կուտակման, փաթեթավորման,	Դժվարացնում է կայուն և հաստատուն որակի և անվտանգության պահպանումը: Գնման և բեռնման գործի կազմակերպումը	(ՀՔ) (ա) ուսումնասիրել այժմ կիրառվող կուտակման գործելակերպերի արդյունավետությունը, (բ) մատնանշել ամենաարդյունավետ եղանակն		Ագրոբիզնեսի աշխատանքային խմբի գործ	

	Խնդիր կամ դիտարկում	Խնդրի ազդեցությունը	Հետագա քայլ (ՀՔ) կամ Առաջարկություն (Ա)	IFC-ի առաջարկվող ներդրումը	Ժամկետ և կատարող մարմին	Նկատառում կամ հետագա աշխատանք
	տեղափոխման և վաճառքի գործը:	դարձնում է ավելի դժվար ու թանկ: Ավելի է բարդացնում բուսասանիտարական և մաքսային հսկողությունն իրականացնելու գործը:	ու Կառավարության կողմից ձեռնարկելիք քայլերը, (գ) գնահատել հարցի իրավական և ֆինանսական կողմը:			
8	Արտոն նշում է, որ բերքի թեժ ժամանակ զգացվում է բեռնատարների պակաս: Այդ պակասը լրացվում է օտարերկրյա բեռնատարներով:	Բեռնատարների պակասը տանում է բեռների տեղափոխման գների բարձրացման և արտահանման ծավալների նվազման:	(ՀՔ) Ուսումնասիրել բեռնատարների շուկան, պարզելու, թե ինչպիսին է իրավիճակը շուկայում և ինչպես է շուկայի կառուցվածքը ազդում տեղափոխման գների վրա, և ինչ միջոցներ կարելի է ձեռնարկել իրավիճակի բարելավման համար:		Ագրոբիզնեսի աշխատանքային խմբի գործ	
9	Սառնարանային պահեստների կարողության, տեղադրության, մատչելիության խնդիրներ:		(ՀՔ) Պարզել, թե արդյո՞ք՝ ▪ բավարար սառնարանային կարողություններ կան, ▪ կան իրավական դրույթներ, որոնք խանգարում են սառնարանային տնտեսությունների զարգացմանը ▪ շուկայում կան սառնարանային տնտեսությունների զարգացումը խոչընդոտող այլ գործոններ:		Ագրոբիզնեսի աշխատանքային խմբի գործ	
10	Խնդիրներ արժեքի ավելացման գործողությունների հետ կապված, օրինակ՝ փաթեթավորման բարելավման կարիք. Գեղամը հաճախ չունի թարմ միրգ ու բանջարեղենի համար հարմար արկղեր կամ տուփեր:	Մրգերի վնասում և կորուստ փոխադրման և պահպանման ժամանակ:	(ՀՔ) Հատկորոշել այն ապրանքները, որոնք ունեն փաթեթավորման խնդիր և որոշել, թե ինչ հարմար միջոցներ կարելի է ձեռնարկել խնդրի լուծման համար:		Ագրոբիզնեսի աշխատանքային խմբի գործ	
11	Դժվարություններ ավտոճանապարհով Լարսի (Վրաստան-Ռուսաստան)	Կորուստներ տարանցման և պահեստավորման	(ՀՔ) Գյուղատնտեսության արտահանման առաջնային		Ագրոբիզնեսի աշխատանքային	Ձգձգումներ ուսական մաքսային սահմանին:

	Խնդիր կամ դիտարկում	Խնդրի ազդեցությունը	Հետագա քայլ (ՀՔ) կամ Առաջարկություն (Ա)	IFC-ի առաջարկվող ներդրումը	Ժամկետ և կատարող մարմին	Նկատառում կամ հետագա աշխատանք
	անցակետով գյուղատնտեսական արտահանելիս: Դժվարությունները կապված են տարանցման ու ընթացակարգերի հետ	ընթացքում	ուղիների հատկորոշում և ռազմավարության մշակում՝ ուղղված խնդիրների լուծմանը:		խմբի գործ: Հայ-Ռուսական տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի գործ:	Միաժամանակ, բուսասանիտարական պատշաճ հսկողության բացակայություն վերին Լարսի անցակետում:
12	Միևուրեք ու բանջարեղենի նկատմամբ սննդամթերքի անվտանգության հնարավոր լայն կիրառումը, ինչը կարող է կրկնողական լինել և կատարվել առանձին և ոչ թե այլ մարմինների հետ համատեղ:		(Ա) Մշակել այնպիսի ընթացակարգեր, որոնք կոդիֆիկացնեն հսկողությունը և չեն խոչընդոտի առևտուրը, և կնվազեցնեն կրկնողությունները:	IFC-ն կարող է օգնել առևտրի ՆՅՈՒՏ ապահովմանն առնչվող հարցերում:	Հայաստանի Սննդամթերքի անվտանգության Ծառայություն	ՀՍԱԾ-ն նշել է, որ ծրագրում է մոտակա ապագայում սկսել միևուրեք ու բանջարեղենի նկատմամբ սննդամթերքի անվտանգության լայն կիրառումը: Ըստ Գյուղնախարարության՝ Սննդամթերքի անվտանգության ռազմավարության շրջանակում այս հարցը պատշաճորեն հասցեգրված է և խնդիրներ չպետք է, որ առաջանան:
13	Գյուղատնտեսության համար անհրաժեշտ ներդրանքի ներմուծման ժամանակ (թունաքիմիկատներ, սերմեր) մաքսային սահմանին որոշ դեպքերում ապրանքները կանգնեցվում են մինչև չստացվեն լաբորատոր փորձաքննությունների արդյունքները: Չի թույլատրվում նաև մաքսային հսկողության տակ բեռնատարը տանել նշանակման վայր:	Դժվարին ու ժամանակատար ընթացակարգ է, որը բարձրացնում է առաքման արժեքը:	(ՀՔ) Պարզել, թե արդյոք սա սովորական գործելակերպ է: Համապատասխան մարմինների հետ քննարկել հնարավոր լուծումները:	Հետագա ուսումնասիրություն IFC-ի կողմից		Իրավական ակտ՝ «Բուսասանիտարիայի մասին» օրենք, ԿՈՐ թիվ 1151 (04.10.2007)

	Խնդիր կամ դիտարկում	Խնդրի ազդեցությունը	Հետագա քայլ (ՀՔ) կամ Առաջարկություն (Ա)	IFC-ի առաջարկվող ներդրումը	Ժամկետ և կատարող մարմին	Նկատառում կամ հետագա աշխատանք
14	Գյուղարտադրության համար անհրաժեշտ ներդրանքի ներմուծման ժամանակ (թունաքիմիկատներ, սերմեր) տեխնիկական հսկողության իրականացման բարդ ընթացակարգեր, որի ընթացքում ներմուծողը ստիպված բազմակի այցեր է կատարում Երևանի տարբեր ծայրերում գտնվող մարմիններ:	Բեռը կորցնում է իր արժեքը ուշացումների, ինչպես նաև հաճախորդի կողմից հնարավոր մերժման պատճառով:	(Ա) դիտարկել ընթացակարգերի, մասնավորապես հայտի ներկայացման և վճարումների կենտրոնացված կատարման հնարավորությունը: Մշակել լուծումներ և փոփոխություններ համապատասխան իրավական ակտերում:	Հետագա ուսումնասիրություն IFC-ի կողմից և աջակցություն իրավական ակտերի մշակմանը:		Իրավական ակտ՝ «Բուսասանիտարիայի մասին» օրենք, ԿՈՐ թիվ 1151 (04.10.2007
15	Գյուղարտադրանքի արտահանման խթանման ռազմավարության բացակայություն, ինչը նշանակում է արտահանման խթանման, ներառյալ ՆՅՈՒՏ ապահովման խնդիրների հաղթահարման միասնական հենքի ու կառույցների բացակայություն:	Որոշ դեպքերում հանգեցնում է տարբեր մարմինների կողմից հետապնդվող նպատակների հակասությունների: Դժվարություններ են լինում խնդիրների և միջոցառումների առաջնահերթությունները սահմանելիս:	(Ա) Ստեղծել Ագրոբիզնեսի ռազմավարության մշակման Աշխատանքային խումբ:	IFC-ն Աշխատանքային խմբին կարող է օգնել արտահանման ՆՅՈՒՏ ապահովման հարցերով:	Գյուղնախը և Էկոնոմնախը հետաքրքրված են այդպիսի խումբ ստեղծելու գործում:	
16	Ընդհանուր առմամբ թարմ միրգ ու բանջարեղենի արտահանման ընթացակարգը Հայաստանում բարդ է և խոչընդոտում է արտահանման խթանմանը:	Լրացուցիչ ծախսեր ու ժամանակի կորուստ և, դրա արդյունքում, տնտեսվարման արդյունավետության և մրցունակության անկում:	(Ա) Թարմ միրգ ու բանջարեղենի արտահանումը պարզեցնելու և դյուրինացնելու համար մշակել պարզեցված և հնարավորինս կենտրոնացված ընթացակարգ, այնպես, որ արտահանողը կարողանա բոլոր փաստաթղթերը արագ ձեռք բերել՝ այցելելով հնարավորինս քիչ գրասենյակներ և կատարելով հնարավորինս քիչ գործողություններ: Հետագայում նման պարզեցված ու կենտրոնացված գործակառույցը կարող է զարգացվել և վերածվել «մեկ պատուհան» համակարգի:	IFC-ն կարող է աջակցել պարզեցված ընթացակարգի մշակմանը:	Գյուղնախ և Էկոնոմնախ, Մաքսային, ՀԱԱՊ, ՀՍԱԾ	

	Խնդիր կամ դիտարկում	Խնդրի ազդեցությունը	Հետագա քայլ (ՀՔ) կամ Առաջարկություն (Ա)	IFC-ի առաջարկվող ներդրումը	Ժամկետ և կատարող մարմին	Նկատառում կամ հետագա աշխատանք
Հնարավոր ագրոբիզնես հարցեր						
17	Գյուղարտադրանքի որակը և դրա կապը միջազգայնորեն ընդունված ստանդարտների հետ, ինչպիսիք են Պատշաճ գյուղատնտեսական պրակտիկան և (կամ) դրանց առնչվող ISO ստանդարտները	Հանգեցնում է ցածր որակի, և անվտանգության ցածր մակարդակի, պահպանման կարճ ժամկետի, ցածր մրցունակության		IFC-ի Ագրոբիզնես թիմի հնարավոր ներգրավում՝ Կառավարությունից պահանջ լինելու դեպքում	Ագրոբիզնեսի աշխատանքային խմբի գործ	Դա նախնական նկատառում է, որը հիմնված է շահագրգիռ կողմերի հետ քննարկումների վրա: Անհրաժեշտ է ագրոբիզնես թիմի փորձագիտությունը . (ա) գնահատելու խնդրի կարևորությունը և (բ) առաջարկելու հետագա քայլեր:
18	Բավարար ուշադրություն չի դարձվում արտահանման շուկաներում գյուղարտադրանքի շուկայավարությանը, պահանջարկի ուսումնասիրությանը և գործողությունների ծրագրմանը, ինչպես նաև բաշխման ցանցերի հաստատմանը և եղածների օգտագործմանը, ինչպես նաև շուկաների ընդլայնմանը:	Արտադրության կազմակերպման, ինչպես նաև միրգ ու բանջարեղենի տեսակների ընտրության հարցում ցածր արդյունավետություն: Եկամուտների կորուստ, որը կարելի էր ստանալ շուկայի բարձրարժեք հատվածներ մտնելով:		IFC-ի Ագրոբիզնես թիմի հնարավոր ներգրավում՝ Կառավարությունից պահանջ լինելու դեպքում	Ագրոբիզնեսի աշխատանքային խմբի գործ	Դա նախնական նկատառում է, որը հիմնված է շահագրգիռ կողմերի հետ քննարկումների վրա: Անհրաժեշտ է ագրոբիզնես թիմի փորձագիտությունը . (ա) գնահատելու խնդրի կարևորությունը և (բ) առաջարկելու հետագա քայլեր:
19	Արտահանման երկրներում կիրառվող տեխնիկական հսկողությանն առնչվող պահանջների վերաբերյալ տեղեկությունների պակասը խանգարում է արտահանման զարգացմանը	Կարող է խոչընդոտել արտահանման զարգացմանը, օրինակ՝ Ռուսաստանի կողմից խաղողի ներմուծման արգելումը:		IFC-ի Ագրոբիզնես թիմի հնարավոր ներգրավում՝ Կառավարությունից պահանջ լինելու դեպքում	Ագրոբիզնեսի աշխատանքային խմբի գործ	Դա նախնական նկատառում է, որը հիմնված է շահագրգիռ կողմերի հետ քննարկումների վրա: Անհրաժեշտ է ագրոբիզնես թիմի փորձագիտությունը . (ա) գնահատելու խնդրի կարևորությունը և (բ) առաջարկելու հետագա

	Խնդիր կամ դիտարկում	Խնդրի ազդեցությունը	Հետագա քայլ (ՀՔ) կամ Առաջարկություն (Ա)	IFC-ի առաջարկվող ներդրումը	Ժամկետ և կատարող մարմին	Նկատառում կամ հետագա աշխատանք
						քայլեր: ԵՄ-ի հետ խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի բանակցությունների շրջանակում հասցեագրվում են նաև այս հարցերը. մասնավորապես, տեխնիկական պահանջների ներդաշնակեցումը ԵՄ-ի պահանջների հետ:
20	Խնդիրներ կապված Հայաստանում գործող ստանդարտների համապատասխանությանը միջազգային ստանդարտներին և դրանց ընդունելիությունը արտահանման շուկաներում	Կարող է խոչընդոտել արտահանման զարգացմանը, օրինակ՝ Ռուսաստանի կողմից խաղողի ներմուծման արգելումը: Կարող է արտահանման շուկաներում նվազեցնել ապրանքի մրցունակությունը:		IFC-ի Ագրոբիզնես թիմի հնարավոր ներգրավում՝ Կառավարությունից պահանջ լինելու դեպքում	Ագրոբիզնեսի աշխատանքային խմբի գործ	Դա նախնական նկատառում է, որը հիմնված է շահագրգիռ կողմերի հետ քննարկումների վրա: Անհրաժեշտ է ագրոբիզնես թիմի փորձագիտությունը . (ա) գնահատելու խնդրի կարևորությունը և (բ) առաջարկելու հետագա քայլեր:
21	Գեղամին միրգ ու բանջարեղենի բերքահավաքի և պահպանման կատարելագործված եղանակների ուսուցման խնդիր	Առաջավոր եղանակների քիչ կիրառությունը հանգեցնում է ցածր որակի, և անվտանգության ցածր մակարդակի, պահպանման կարճ ժամկետի, ցածր մրցունակության		IFC-ի Ագրոբիզնես թիմի հնարավոր ներգրավում՝ Կառավարությունից պահանջ լինելու դեպքում		Դա նախնական նկատառում է, որը հիմնված է շահագրգիռ կողմերի հետ քննարկումների վրա: Անհրաժեշտ է ագրոբիզնես թիմի փորձագիտությունը . (ա) գնահատելու խնդրի կարևորությունը և (բ) առաջարկելու հետագա քայլեր:

	Խնդիր կամ դիտարկում	Խնդրի ազդեցությունը	Հետագա քայլ (ՀՔ) կամ Առաջարկություն (Ա)	IFC-ի առաջարկվող ներդրումը	Ժամկետ և կատարող մարմին	Նկատառում կամ հետագա աշխատանք
22	Արտադրության ծավալների, ծրագրված արտադրության ու դրա տեղի, շուկայական գների վերաբերյալ ամբողջական և ժամանակին տեղեկությունների բացակայության հարցը, ինչը բացասաբար է ազդում ապրանքների մատակարարման կայունության վրա:	Հաճախ հանգեցնում է գների անհիմն բարձրացման՝ Գեղամի կողմից խաղարկման պատճառով:		IFC-ի Ագրոբիզնես թիմի հնարավոր ներգրավում՝ Կառավարությունից պահանջ լինելու դեպքում		Դա նախնական նկատառում է, որը հիմնված է շահագրգիռ կողմերի հետ քննարկումների վրա: Անհրաժեշտ է ագրոբիզնես թիմի փորձագիտությունը . (ա) գնահատելու խնդրի կարևորությունը և (բ) առաջարկելու հետագա քայլեր: Ըստ Գյունախարարության Ագրոլտարու պարբերականի, ԳԱՀԿ-ի միջոցներով պարբերաբար հրապարակվում են նման տվյալներ:
Հնարավոր հարկային հարցեր						
23	1, 2, և 3 կետերում նշված խնդիրները (միզ ու բանջարեղենի նկատմամբ «կողմնորոշիչ գների» կիրառում, լրացուցիչ փաստաթղթերի պահանջ) Մաքսային կողմից կապված է ԱԱՀ-ով և շահութահարկով (եկամտահարկով) հարկման հետ ինչպես Հայաստանում, այնպես էլ արտահանման երկրում:	Գների բարձրացում և արտահանման շուկայում հայկական ապրանքի մրցունակության անկում: Դժվարին ընթացակարգ է, որը բարձրացնում է առաքման արժեքը՝ ապրանքի կորստի (քանի որ շուտ փչացող է) և տեղափոխման ավելորդ ծախսերի պատճառով				Դա նախնական նկատառում է, որը հիմնված է շահագրգիռ կողմերի հետ քննարկումների վրա: Անհրաժեշտ է ագրոբիզնես թիմի փորձագիտությունը . (ա) գնահատելու խնդրի կարևորությունը և (բ) առաջարկելու հետագա քայլեր:
Այլ հարցեր. Քաղաքականության և ենթակառուցվածքների հետ կապված հարցեր – ոչ ներդրումային միջավայրի հարցեր						
24	Առևտրային քաղաքականության հարցեր. օրինակ՝ Վրաստան խաղողի		(ՀՔ) Հետագա ուսումնասիրություն		Համապատասխան մարմինն ու	


	Խնդիր կամ դիտարկում	Խնդրի ազդեցությունը	Հետագա քայլ (ՀՔ) կամ Առաջարկություն (Ա)	IFC-ի առաջարկվող ներդրումը	Ժամկետ և կատարող մարմին	Նկատառում կամ հետագա աշխատանք
	արտահանումը վրացական մաքսայինի կողմից արգելելու հարցը, Վրաստանի կողմից սելիտրայի տեղափոխման արգելքը և վրացական սելիտրայի նկատմամբ քվոտայի կիրառումը:		Կառավարության կողմից		ձևաչափը կորոշի Կառավարությունը	
25	Դրամական միջոցների մատչելիության խնդիր. ընթացիկ կապիտալի (աշխատող դրամի) պակաս թեժ ժամանակ, որովհետև Գեղամին վճարում են կանխիկ դրամով:		(ՀՔ): ՓՄՁ ԶԱԿ-ը հետաքրքրություն է հայտնել Արտոյի համար դրամի մատչելիության ապահովման հատուկ գործիք մշակելու համար:	Դրամի մատչելիության բաժնի աշխատողներ, IFC կայուն բիզնեսի խորհրդատվական ճյուղ		Ծրագրի աշխատակիցներին. Գտնել համապատասխան IFC/ՀԲ մասնագետ, ով կարող է աշխատել ՓՄՁ ԶԱԿ-ի հետ

V. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՔԱՐՏԵԶՆԵՐ

Միրգ ու բանջարեղենի ընթացակարգեր – արտահանում ուղղակի այգուց

Միրգ ու բանջարի ընթացակարգեր – արտահանում ուղղակի այգուց



ԲՆԱԴՐՈՒՄ ԵՎ ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄ → **ԳՈՒՏԱԿՈՒՄ ԵՎ ԲԵՌՆՈՒՄ** → **ՏՆՐԱԾՈՒՄ ԵՎ ՊԱՀԵՍՏԱՎՈՐՈՒՄ** → **ԲՈՒՄ. ԵՎ ՄԱՆԴ. ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ** → **ԾԱԳՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐՈՒՄ** → **ՄԱՔՍԱՅԻՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ** → **ՏԵՂԱԾՈՒՄ Մ.-ՄԱՔՍ.-ՄԱՀՄԱՆ** → **ԲԱԹՂՈՒՄ ԵՎ ԱՌԱՔՈՒՄ**

Արտոն Գեղամին վճարում է կանխիկ դրամով

Գեղամը այցելում է Գյուղապետին և վերցնում Գյուղապետի տեղեկանքը

Գեղամն ու Արտոն պատրաստում է 5 թղթերի փաթեթ:

1. Գյուղապետի տեղեկանք
2. Գեղամի անձնագրի պատճեն
3. Առուվաճառքի պայմանագիր Գեղամի և Արտոնի միջև
4. Գնման ակտ
5. Նյթի դրամարկային օրդեր

Արտոն կարող է կանչել Մաքս.-տեսուչ, որ նա գա այցի, տեսնի կշռման և բեռնման ընթացքը, և կնքի բեռնատարը

Արտոնից կարող է պահանջվել, որ նա բեռնատարը տանի Մաքս.-պահեստ, կշռի և ստանա կշռման թուղթ

Արտոն հրավիրում է Բուս.-տեսուչ

Բուս.-տեսուչը այցելում է ՊԱՀԵՍ, տեսնելու ապրանքը և ԲՈՒՄ հավաստագիր տալու

If produce is OK

Բուս.-տեսուչը տալիս է ԲՈՒՄ. Հավաստագիր

Արտոն վերցնում է 5 թղթերը և գնում ՀԱԱՊ ծագման հավաստագիր ստանալու

Նրե թղթերը կարգին են

ՀԱԱՊ-ը տալիս է Ծագման հավաստագիր

Արտոն տանում է 9 թղթերը (5 թղթեր+ԾԵՀ+ՀԱԾԻՎ ԱՊՐԱՆՔԱԳԻՐ+ԲԵՌՆԱԳԻՐ) Մաքսատուն հայտարարագրման համար

Նրե թղթերը կարգին են

Մաքս.-Հայտարարագիր

Բեռնատարը գնում է Մաքս.-սահման: Վարորդը թղթերը տալիս է Մաքս.-տեսուչին ստուգման

Մաքս.-տեսուչը ստուգում է թղթերը և կնիքը


Նրե խնդիր չկա

աջողման կնիք է դրվում


Բեռնատարը մեկնում է Հայաստանից

Թարմ միրգ ու բանջարեղենի ընթացակարգեր –նոր քաղաք արտադրանքի արտահանում օդանավով

Թարմ միրգ ու բանջարի ընթացակարգեր –նոր քաղաք արտադրանքի արտահանում օդանավով



Գյուղատնտեսական թունաքիմիկատների ներմուծման ընթացակարգեր



Գյուղատնտեսական թունաքիմիկատների ներմուծում-ներմուծողի տեղաշարժերը Երևանում

From BCP

1

Address Yerevan
Armenia

Movements of an Importer
of Pesticides & other chemicals



ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԳՅՈՒՂԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ: 2009-2011 Թ.Թ.

Կոդ	ԱՊՐԱՆՔԱՑԻՆ ԵՆԹԱՆՈՒՄԲԸ	2009				2010				2011(նախնական)			
		Քանակ՝ տ	ԱՄՆ դոլար, հազար	Ամբողջի %	Գյուղ. արտ.-ի %	Քանակ՝ տ	ԱՄՆ դոլար, հազար	Ամբողջի %	Գյուղ. արտ.-ի %	Քանակ՝ տ	ԱՄՆ դոլար, հազար	Ամբողջի %	Գյուղ. արտ.-ի %
	Ընդհանուր	527,054	710,157.5			587,617	1,041,057						
	Ընդհանուր գյուղատնտեսական						170,477	16.4%	100%				
701	Կարտոֆիլ	5,909.5	774.4			4,381.1	755.1	0.07%	0.44%	901.7	306.2		
702	Տոմատ	621.3	144.8			898	559.4	0.05%	0.33%	112.9	63.6		
703	Գլուխ սոխ, սխտոր	20.4	51.0			43.4	34	0.00%	0.02%	50.5	40.5		
704	Գլուխ կաղամբ, ծաղկակաղամբ եւ Brassicas ցեղի այլ համանման ուտելի բանջարեղեն՝ թարմ կամ պաղեցրած	0.7	0.2			1,924.1	609.2	0.06%	0.36%	1,075.0	441.0		
706	Գազար, շաղգամ, բագուկ, բոդլ	465.8	53.8			395.8	74.2	0.01%	0.04%	5.96	3.4		
707	Վարունգ	44.7	12.3			169.9	60.1	0.01%	0.04%	29.2	16.2		
708	Լոբզագի բույսերի հատիկներ (ոսպ)	1.9	5.4			2.4	4.7	0.00%	0.00%	5.2	6.67		
709	Սունկ, գետնասունկ, դրմիկ, սմբուկ, սպանախ, ձիթապտուղ, պղպեղ	506.5	311.3			531.5	285.3	0.03%	0.17%				
710	Խառը բանջարեղեն	9.4	8.8			58.1	17.2	0.00%	0.01%				
711	Բանջարեղեն (պահածոյացված)	311.2	243.9			261.9	191.1	0.02%	0.11%				
712	Բանջարեղեն (չորացրած)	0.5	1.3			3.9	4.4	0.00%	0.00%				
802	Ընկույզ, պնդուկ, շագանակ, պիստակ	3.5	12.4			0.2	2.5	0.00%	0.00%				
806	Խաղող, չամիչ	3,743.8	2,195.5			6,262.9	4871.6	0.47%	2.86%	6,339	6,580.7		
807	Զմերուկ, սեխ	601.2	139.3			63.9	13.6	0.00%	0.01%	128.2	66.4		
808	Խնձոր, տանձ, սերկեւիլ	401.1	167.5			26.6	12.1	0.00%	0.01%				
809	Ծիրան, բալ, դեղձ, կեռաս, հոն	12,096.3	5,315.9			2,488.5	1,731.4	0.17%	1.02%	7.500	7,435.8		
810	Ելակ, մոշ, մորի, թուր, հաղարջ, կիվի, նուռ	55.3	25.7			71.7	51.9	0.00%	0.03%				
811	Մշակված հատապտուղ	103.2	257.4			42.4	70.2	0.01%	0.04%				
813	Չորացրած պտուղ	40.2	73.4			90	133.9	0.01%	0.08%				
	Ընդհանուր միջև և բանջարեղեն						9,481.9						

Աղբյուրը՝ ԱՎԾ «ՀՀ արտաքին առևտուրը» տարեկան հաշվետվություններ (4 նիշ)

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստան ներմուծվող և Հայաստանից արտահանվող բույսերը և բուսական արտադրանքը, ներառյալ՝ փայտից պատրաստված ապրանքները և կարգավորվող բուսասանիտարական այլ ապրանքներ (օրինակ՝ թունաքիմիկատներ, պարարտանյութեր և այլն) ենթակա են բուսասանիտարական հսկողության: Դրա նպատակը Հայաստանում բույսերի ու մարդկանց առողջության ու անվտանգության բարձր մակարդակի ապահովումն է:
2. Մրցունակ ապրանք արտահանելու համար կարևորվում է մրցունակ հումքի (օրինակ՝ սերմեր, տնկիներ) կամ արտադրության համար պահանջվող այլ նյութերի (օրինակ՝ թույներ, դեղեր, պարարտանյութեր, գործիքներ ու սարքեր) ներմուծումը: Հետևաբար, կարևոր է նույնպես ներմուծման ՆՅՈՒՏ շղթայի արդյունավետ աշխատանքի ապահովումը:
3. Բույսերի և բուսական արտադրանքի ներմուծմամբ և(կամ) արտահանմամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտները պետք է գրանցվեն Բուսասանիտարական պետական տեսչությունում (ԲՈՒՍՊԵՏ) և ձեռք բերեն համապատասխան **բուսասանիտարական հաշվառման վկայական**: Առանց այս փաստաթղթի տնտեսվարող սուբյեկտները չեն կարող ներմուծել կամ արտահանել բույսեր և(կամ) բուսական արտադրանք:



Բուսասանիտարական հաշվառման վկայական

Արտահանման ընթացակարգ

4. Բույսեր և բուսական արտադրանք արտահանելու համար արտահանողները բուսասանիտարական հավաստագրի համար պետք է հայտ ներկայացնեն ԲՈՒՍՊԵՏ:



Հայտ արտահանման համար

5. Հայտում պետք է ընդգրկված լինեն հետևյալ տվյալներն ու տեղեկությունները.
 - տեղեկություններ Հայաստանից արտահանողի մասին

Մալիկ 1.

Հիմնական իրավական փաստաթղթեր

1. «Բուսասանիտարիայի մասին» օրենք, ընդունված 2006թ. նոյեմբերի 27-ին
2. Կառավարության թիվ 1093-Ն որոշում (2007թ.-ի օգոստոսի 30) Բուսական ապրանքների ներմուծման թույլտվության և ներմուծման, արտահանման, վերաարտահանման բուսասանիտարական հավաստագրերի տրամադրման կարգը և ձևերը հաստատելու մասին:

Հասկացություններ

1. Բուսասանիտարական հսկողության սահմանային կետ
2. Բուսասանիտարական հավաստագիր, ներմուծման կամ արտահանման համար
3. Բուսասանիտարական հաշվառման վկայական
4. Բուսասանիտարական անձնագիր
5. Փորձաքննության լաբորատորիա

- տեղեկություններ ներմուծող (արտահանման) երկրում ներմուծողի մասին
 - ներմուծող երկիրն ու նշանակման վայրը
 - արտահանվող բուսական արտադրանքի նկարագրությունը և ծավալը
 - սահմանը հատելու կետը, որտեղից ապրանքները մուտք են գործելու արտահանման երկիր:
6. Արտահանման բուսասանիտարական հավաստագիրը, եթե փաստաթղթերի ու բեռի զննման ժամանակ խնդիրներ չեն հայտնաբերվում, տրամադրվում է հայտը ստանալուց հետո՝ երեք օրվա ընթացքում: Այդ ընթացքում ԲՈՒՍՊԵՏ-ի ծառայողը իրականացնում է խնդրո առարկա ապրանքների ֆիզիկական (արտաքին) զննում և համոզվում, որ դրանք համապատասխանում են ներմուծող (արտահանման) երկրի բուսասանիտարական պահանջներին:
7. Կարևոր է նկատել, որ բուսասանիտարական հավաստագրի հայտ կարելի է ներկայացնել նաև բուսասանիտարական սահմանային հսկիչ կետ: Ընդ որում, համաձայն Կառավարության թիվ 1093-Ն որոշման՝ այդ դեպքում հավաստագիրը պետք է տրվի հայտն ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:
8. Բուսասանիտարական անձնագիր ներկայացնելու դեպքում բուսասանիտարական հավաստագիրը տրվում է անմիջապես:



▪ **Արտահանման բուսասանիտարական հավաստագիր**

9. Արտահանման բուսասանիտարական հավաստագիրը տրամադրվում է անվճար:
10. Արտահանման բուսասանիտարական հավաստագիրն ուժի մեջ է 14 օր՝ տրված օրվանից մինչև երկրի սահմաններից դուրս բերելը:
11. Հատուկ ընթացակարգեր կան նաև **սերմերի և տնկիների համար**, որոնց մենք չենք անդրադարձել սույն հուշագրի մեջ:
12. Եթե բեռի անվտանգության հետ կապված որևէ կասկած կա, ապա տեսուչը կատարում է նմուշառում բեռից և նմուշներն ուղարկում բուսասանիտարական լաբորատորիա՝ փորձաքննության համար: Ենթադրվում է, որ բուսասանիտարական տեսչական հսկողության սահմանային կետերը պետք է ունենան փորձաքննական լաբորատորիաներ, սակայն դրանք կամ գոյություն չունեն, կամ թերզինված են և չունեն բավարար կարողություններ՝ պատշաճ փորձաքննություններ անցկացնելու համար:

Ներմուծման ընթացակարգ

13. Բույսերի և բուսական արտադրանքի ներմուծումը թույլատրվում է միայն բուսասանիտարական զննում և ստուգում անցկացնելուց հետո:

14. Բեռի մաքսային ձևակերպումը կատարվում է միայն բուսասանիտարական ստուգումից հետո՝ արտահանող երկրի տված բուսասանիտարական հավաստագրի առկայության դեպքում:
15. Ներմուծման համար բուսասանիտարական հսկողության ենթակա բեռին պետք է ուղեկցի արտահանման երկրի համապատասխան մարմնի կողմից տրված բուսասանիտարական հավաստագիր, որով հավաստվում է, որ ներմուծվող ապրանքները վարակված չեն վտանգավոր հիվանդություններով և ծագում են կարանտին նշանակության վարակիչ հիվանդություններից զերծ տարածքներից:



Արտահանող երկրի բուսասանիտարական հավաստագիր

16. Ներմուծման բուսասանիտարական հավաստագիրը տրամադրվում է սահմանային բուսասանիտարական տեսուչի կողմից Բուսասանիտարական հսկողության սահմանային կետում (ՀՄԿ)՝ ներմուծվող ապրանքներին ուղեկցելու և հավաստելու, որ ներմուծվող ապրանքները համապատասխանում են բուսասանիտարական պահանջներին: Բուսասանիտարական տեսչական ՀՄԿ-եր կան սահմանային մաքսային բոլոր կետերում:
17. Ներմուծման բուսասանիտարական հավաստագիր տրամադրելու համար տեսուչը սկզբում ստուգում է ներկայացված փաստաթղթերը, այնուհետև, բացելով բեռը, անց է կացնում բեռի ֆիզիկական զննում՝ (ա) բեռը նույնականացնելու համար և (բ) տեսողական մակարդակով ստուգելու՝ արդյոք կա որևէ վարակ կամ այլ խնդիր: Եթե խնդիրներ չկան, ապա տեսուչն **անմիջապես** տրամադրում է ներմուծման բուսասանիտարական հավաստագիր՝ բեռն ուղեկցելու համար:



Ներմուծման բուսասանիտարական հավաստագիր¹⁸

18. Եթե բեռի անվտանգության հետ կապված որևէ կասկած կա, ապա տեսուչը կատարում է նմուշառում բեռից և նմուշներն ուղարկում բուսասանիտարական լաբորատորիա՝ փորձաքննության համար: Մինչև լաբորատոր փորձաքննության արդյունքների ստացումը չի թույլատրվում բեռի ներմուծումը:
19. Ենթադրվում է, որ բուսասանիտարական տեսչական հսկողության սահմանային կետերը պետք է ունենան փորձաքննական լաբորատորիաներ, սակայն դրանք կամ գոյություն չունեն, կամ թերզինված են և չունեն բավարար կարողություններ՝ պատշաճ փորձաքննություններ անցկացնելու համար:
20. **Նկատառում, նշում.** Ըստ փորձագիտական կարծիքի, ներկայումս բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքներ պարունակող բեռների (խմբաքանակների) կեսից ավելին ԲՈՒՄՊԵՏ-ի կողմից ենթարկվում է ֆիզիկական

¹⁸ Գործնականում, եթե փաստաթղթերն ամբողջական են և զննման ժամանակ վնասակար էակներ կամ մարմիններ չեն հայտնաբերվել, ապա ներմուծման համար նոր ներմուծման հավաստագրի փոխարեն բեռն ուղեկցող՝ արտահանող երկրի հավաստագրի պատճենների վրա դրվում է դրոշմ և կնիք (երկու օրինակ):

ստուգման, նմուշառման ու լաբորատոր փորձաքննության սահմանային մաքսակետերում: Լաբորատոր փորձաքննությունը կարող է տևել մինչև 1 օր, իսկ արժեքը տատանվել՝ 30,000 ՀՀ դրամից (մոտ 82 ԱՄՆ դոլար) մինչև 8,000 ՀՀ դրամ (մոտ 22 ԱՄՆ դոլար):

21. Բավարար զինված ու կահավորված է մայրաքաղաք Երևանի մոտ գտնվող Մերձավանի լաբորատորիան, որը հեռու է սահմանային կետերից: Անհրաժեշտ է դիտարկել՝ (ա) սահմանային հսկիչ կետերի լաբորատորիաների կարողությունների զգալի բարելավումը՝ հնարավորություն տալով դրանց անցկացնել արագ և բարձրորակ փորձաքննություններ, կամ (բ) հիմնվելով վտանգների (ռիսկի) գնահատման վրա, թույլատրել, որ բեռները հատեն սահմանը, իսկ փորձաքննությունների անհրաժեշտության դեպքում, անցկացնել հետո:
22. **Նկատառում, նշում.** Բուսասանիտարական տեսուչը տրամադրում է ներմուծման բուսասանիտարական հավաստագիր յուրաքանչյուր խմբաքանակի (բեռի) համար, այսինքն, յուրաքանչյուր խմբաքանակին պետք է ուղեկցի առանձին հավաստագիր: